

7987

Հայ հրաշնոր
սանտարիան ժող

9(47.925)

2-43

վեհերի .

1930



ՀԱՅ ԴՐՕՇՆԵՐԸ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ԳՐԵՑ


Հ. ՎԱՐԴԱՆ Վ. ՀԱՅՈՒՆԻ

Բ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



ՏԻԿ - Ս. ՂԱԶԱՐ

1930



ՀԱՅ ԴՐՕՇՆԵՐԸ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷԶ

2004

100

2

150

1

(47.925)

2-43


Վ. ՀԱՅ ԴՐՕՇՆԵՐԸ

ՊԱՏԽՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ԳՐԵՑ

Հ. ՎԱՐԴԱՆ Վ. ՀԱՅՈՒՆԻ

Բ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



ՎԵՆԵՏԻԿ - Ս. ՂԱԶԱՐ

1930

26360. Vn



4631-56

8

Ա Ձ Դ

Հայ ազգիս ձախատագրին վճռական վայրկենին, յորոշմ տարոչերեցանք մահոշ և կենաց մեջ, և մինչ ազատոչեան բռնն տենչն ու յոյսը կը վառէին զմեզ, ամեն զարգացեալ հայորդշոյ գաղափարականն եղաւ՝ հայկական Դրօշ մը բարձրացած տեսնել: Այն պահոշն շատերը գրեցին ու խօսեցան այս մասին, շատերն յայտնեցին զանազան և ընդհանրապէս հապճեպ կարծիքներ, և հնարոչեցան իսկ դրօշի պէպէս ձեւեր ու գոյներ, գրերի մեծ մասը պատմոչքենն առնելոշ դիտմամբ ու ջանքով, րիւ արդիւնքը չհամապատասխանեց նպատակին:

Քաղաքական մի և նոյն հանգամանք գիտալ յորդորեցին ձեռնարկել ներկայ աշխատոչքեանս, որ 1917էն արդեն պատրաստ, պատերազմի պատճառաւ խոշձապէն խափանոչեցաւ յոյս տեսնելոշ, և յետ երկոշ տարոշոյ միայն կրցալ ընծայել ազգայնոցս բարեյօժար ու մտադիր նկատոչոչքեան:

Ասոր մեջ չի շօշափաւ ըստ հաճոյս յայտնոչաւ կարծիքներն ու ծրագիրներ, որովհետեւ քննոչքեանս նիւր անցեալն էր միայն: Այ ալ այն ամենը՝ որ իբր պատմական ի յայտ եկան առանց պայացոչցի, և հետեւաբար ոչ յաջոչ

կերպով, որոց ժխտումը՝ պատմություն լռա-
թիւնն իսկ է, և պատասխանը՝ պատմա-
կանին հաւատարիմ ցոշադրութիւնը:

Միտքս չէի դրած ոչ այն ժամանակ և ոչ
այժմ, թէ վերջին խօսքն ըսած եմ մեր նիւթին
նկատմամբ: Բայց կը համարիմ ըստ ըստա-
կանին ցրոշած շինել մեր հին դրօշները պատող
շամանդադր: Այս կարծիքս արդարացունցին՝
գնահատական երկար էջերով՝ ազգիս ծանօթ
քանասերք. ինչպէս Մ. Անանիկեան (Առջնակ,
5 մայր. 1919), Ս. Մ. Գրիգորեան (Ararat,
1919, էջ 336), Մ. Զեքազ և խմբագրութիւն
Սիսուանի (4 մայր. 3 ըոյ. 1919), Հանգ.
Ամօրեայ (մայր. 1920) և այլք. ըոյնպէս
առանձնական նամակներ. վկայելով թէ հին
դրօշներու մասին միակ վստահելի տեղեկոշ-
թիւնը այս քննութեանս մէջ որոնելի էին: Նոյն-
նը հաստատեց և ազգը, սպառելով գործիս
առաջին տպագրութիւնը, և ստիպելով զմեզ
երկրորդիս:

Եթէ մեր քաղաքային պատմութեան տեսա-
կիտով հետաքրքրական են քաղաքական դրօշ-
ները, եկեղեցական պատմութեան համար ևս
ոչսագրաս են եկեղեցական վառերը: Հետևա-
բար, ինչպէս և մեր նիւթին անբողջութեան
համար, մեզ կը մնար երկոշքն աշ նկատել հոս,
բաժնելով սոյն աշխատութիւնը կրկին մա-
սանց:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՇՆԵՐ

Ա. — ԿՈՉՈՒՄՆ: — Դրօշ, կամ հին գրու-
թեամբ ու հնչմամբ Դրաշ, ծանօթ արդէն
ռակեղարեան լեզուին մէջ¹, կը ծագի
պրս. դրաշ կամ պարթ. դրաշա հոմա-
նըշերէն: Եւ ըստ իս արմատակից է մեր
դրօշն ըսելին, որ հին հայերենի մէջ կը
նշանակէր արձան շինել որ և է նիւթէ,
ինչպէս կը գտնենք գործածուած Ս. Գը-
րոց թարգմանութեան մէջ (Խմատ. ԺԳ,
13 ևն) և այլուր, հանդերձ դրօշող (Ոս-
կեբ. Փիլիպ.) և դրօշագործութիւն (Եզնիկ,
Գ, Ե) բարդերով, ուսկից դրօշաւ (Եւբ,
ԼԳ, 13 ևն) կամ բուն դրօշ (Սիրաբ, ԼԸ,
28) կուռք կը նշանակեն: Հին ազգաց
նախնազոյն կամ ազնուազոյն նշաններն
արձանակերպ էին, անոր համար մեր

1. Փաւստոս, Գ, Գ: — Եղիշէի Պատմ. Վնեւիկ,
1893, էջ 180:

հայրերէն դրօշք ըսուեցան: Եւ նոյն կոչումն ընդարձակուելով՝ անցաւ նաեւ ձողարարձ նշանաւոր կոտաւին, որոյ անունը Յունաց և Հռովմայեցւոց քով ուրիշ ծագումն ունէր:

Կայ ոսկեդարէն աւանդուած, և յետոյ կրկնուած շատերէ, նաեւ վառ (Փաւստոս, Ե, ԼԳ), ուսկից է վառել բայը՝ զինելու իմաստով (Թիւք, ԼԱ, Յ, Ծ ևն). ըստ որում դրօշը զինուորական գործի մ'էր և զինուց մասն. ինչպէս եւրոպական ազգերն ալ այժմ զենք (armes) կը կոչեն արքունի կամ ազնուական նշանը:

Ե դարը մեր նիւթին տուաւ՝ և յաջորդք պահեցին՝ Նշան (Փաւստ. Ե, Գ, ԽԳ) կամ Նշանակ՝ կոչումն ալ, որ ըստ ձայնին էր իսկապէս դրօշին վրայ նկարուած յատուկ ձևը կամ պատկերը, ինչպէս որոշակի կ'երևի Փարպեցւոյն սաբացատրութեան մէջ ևս, «նշանք դրօշիցն»², մին յատկացեալ, միւսն յատկացուցիչ, և որ լայն առմամբ յաճախ նշանակած է ամբողջ դրօշն ինքնին (Փաւստոս Ե, Գ, ԽԳ. Բ Մակաբ. ԺԵ, 21. ևն): Սոյն բառն ի մէջ այլոց կը գոր-

1. Աղաթանգեղոս, Վենետիկ, 1862, էջ 602. Թով. Արծրունի, Ապուլիս, 1852, էջ 268.

2. Ղազ. Փարպեցի, Վենետիկ, 1873, էջ 211.

ծածէին ուրիշ հին ազգերն ալ, Պարսիկները նիշան, Յոյնք σημεῖον, Լատինք signum կոչելով:

Միջին դարն արաբական ազդեցութեան ներքև հայ բնիկ կոչումները փոխանակեց Ալլամ¹ արաբերենով, որ այժմ ծանօթ է սեմական լեզուաց՝ ալեմ հնչմամբ. և Դաշանց թղթոյն մէջ ալ կը կարդանք՝ «ի վառս ասնձախացն» (գրչ. Ս. Դազարու), նոյնպէս արաբերէն: — Դրօշ, նշան և ալլամ յետոյ իսառնուեցան բարդ բառերու մէջ ևս, որոց պիտի հանդիպինք յաջորդաբար:

Իսկ այժմեան Դրօշակ ձևը կը գտնուի դասական լեզուին մէջ՝ զգեստի քղանցին իմաստով միայն (Անգէ, Բ, 13. ևն), թէպէտև Գիւտ կաթողիկոսի թղթին մէջ գործածուած է նաև դրօշի նշանակութեամբ², եթէ սակայն գրչագրի սխալ չէ: Եւ յամենայն դէպս նախամեծար համարելի է դասական ձևը:

Բ. — ԾԱԳՈՒՄՆ: — Շատ հին է դրօշին սկիզբը: Բոլոր ազգերը պատերազմաց մէջ իրենց հետ կը կրէին՝ ինչպէս ըսինք՝ նշաններ, այս ինքն նկարուած

1. Մխ. Այրիվանեցի, Պատմ. Հայոց. Մոսկուա, 1860, էջ 55: — 2. Մով. Կազանկատուացի, Մոսկուա, 1860, էջ 18.

կամ քանդակուած ձևեր՝ երկար ձողերու
 ծայր անցուցած, որոնք պատկերներ էին
 իրենց աստուածոց, և կամ խորհրդաւոր
 զարդեր. ու նպատակ ունէին՝ պաշտպա-
 նել իրենց ներքե կռուող զօրքը, արծար-
 ծել անոնց եռանդը, և առաջնորդել ի յաղ-
 թանակ։ Հռովմայեցիք ուղղակի կը պաշ-
 տէին իրենց արծուենշաններն՝ իբրեւ լե-
 գէոնաց աստուածներ¹։ Դարերու յաջոր-
 դութիւնն յետոյ փոխեց դրօշին նախկին
 իմաստը, և անոր մէջ ամփոփեց տոհմի
 կամ ազգի գաղափարը, մուծանելով զայն
 նաեւ քաղաքական կենաց մէջ՝ թէ օտա-
 ւաց և թէ մեր քով։

Մեծն Կոստանդիանոսի աչքերը, որ տե-
 սան Աւետարանի լոյսը, ի բաց նետեցին՝
 ինչպէս գիտենք՝ իւր դիցապաշտ հարց
 նշանները, և անոնց տեղ կանգնեցին Յի-
 սուսի նշանը, խաչը, որ ընդունուեցաւ
 բոլոր քրիստոնեայ ազգերէն որպէս հա-
 սարակաց դրօշ մը՝ տոհմայնէն զատ։ Տոհ-
 մայնին վրայ դրոշմած էր զօրաց հրա-
 մանատար արքային կամ իշխանին տան
 սեպհական նշանը, որ բնականապէս փո-
 փոխական էր ըստ տոհմի և գնդի։ Իսկ
 խաչը կը կազմէր հասարակաց կամ ժո-

1. Daremberg et Saglio, Dict. des Antiq, gr.
 et rom. հտ. Դ, 1307-8, 1324.

դովրդական դրօշը, որ կը զանազանէր միջին դարերու եւրոպական ազգաց մէջ՝ կտաւին ու խաչին անհաւասար գոյներով ու ձևերով։ Սակայն ամէն կտաւ միա-գոյն էր միշտ՝ ինչ ալ լինէր իւր երան-գը։ Բոլորովին նոր գիւտ է՝ կտաւին վրայ պէսպէս գոյներու համադրութիւնը, ինչպէս կը հաւաստեն եւրոպացի մաս-նագէտք, և իմ ալ քննութիւնը եւրո-պեան հին վառերու հրատարակութեանց մէջ՝ ցոյց տուաւ։

Այսքանն իբր հիմ դնելնէս վերջ՝ անց-նինք նկատել մեր ազգին հին դրօշները, զորս պիտի համեմատենք օտարաց հետ ուր որ հարկաւոր է՝ մերոց առաւելագոյն բացայայտութեան համար։

Գ. — ՀԱՅ ԴՐՕՇՆԵՐ։ — Եթէ չեմ սը-խալիր, այս խնդրով առաջին անգամ զբաղած է Հ. Ղ. Խնճիճեան, Միիթա-րեան միաբանութենէս¹, բայց շատ հա-մառօտ կերպով, յիշելով միայն քանի մը ծանօթ վկայութիւն ի նպաստ դրօշուց գոյութեան մեր քով, և առանց յաջողելու տալ մեզ անոնց գոհացուցիչ բացատրու-թիւնը։ Այսպիսի կարևոր խնդիր մը չէր կարող անտեսել հայրենի հնութեանց ու-րիշ խուզարկու մը, Հ. Ղեւ. Ալիշան,

2. Հնախօսութիւն Հայաստանեայց, հտ. Բ. 235.

որ աւելի քան կէս դար յառաջ իւր երգոց մէջ հայ ազգային դրօշն երեակայեց եռագոյն, իսկ թագաւորականը՝ սպիտակ, գրելով այսպէս առաջնոյն մասին.

«Մի եռաւիայլ եռախորհուրդ կարմիր-կանաչ-կապոյտոյ Հայոց,
Դրօշք հայրենի, յէն առեալ դու զծալ
ի ծալ ծոցոյդ պարզուած՝
Մինչ ի ծովէն յաւիտենից ժամանակ նոր
դեռ բանայր ծոց » :

Եւ այլուր ազգայինն ու թագաւորականին նկատմամբ միանգամայն կ'ըսէր.

« Կարմիր՝ կանաչ և կապոյտ սաւառնեալ
գրոհից դրօշք,
Զպայտակաւն արքեւեաւ բարձրանային
բաջորոշք »¹ :

Առաջին տողերուն մէջ դիւրին է տեսնել՝ որ Հայոց գոյները կը համեմատէր ծիւածանին հետ, որ էր « յէն առեալ » :

Հետաքրքիր, և անբաւական այդ բանաստեղծական տողերով, օր մը հարցուցի հանգուցեալ հեղինակին՝ թէ պատմական ինչ փաստեր կային ի նպաստ երեք գունոց։ Յարգելի ծերունին չըսաւ՝ թէ ինք հնարած էր զանոնք։ Այլ յետ խու-

1. Նոշաֆք, 1867, Գ, էջ 7 և 200.

զարկելու իւր ձեռագրաց մէջ, թղթի փոք-
րիկ բեկորի մը վրայ նշանակած յանձ-
նեց ինձ չորս տեղիք՝ առանց բան մ'ըսե-
լու . ոչ ալ ես համարձակեցայ հարցնել:
Ու երկար տարիներ սրբազան նշխարի
մը պէս պահեցի այդ թղթիկը, զոր կը
հրատարակեմ հիմայ: Յայտնի է՝ թէ հոն
նշանակածներն իւր տեսութեան մէջ ալ
իրենց բաժինն ունեցած էին, և թէ պատ-
մական հաւանականութեան մը վրայ հիմ-
նած էր իւր զաղափարը: Այդ տեղիքն
էին. 1, կեղծ Եպիփանու Դատաւարակի
պատմութիւնը, յորում կ'ըսուի՝ թէ Աբգար
պատրաստել կու տայ երեք հազար մոմե-
ղէն « ի գոյն երեք. ապիտակ, կարմիր,
կանաչ և ոսկեզարդ»: 2, Թովմա Մեծո-
փեցին ժեղարուն հայրապետական աթո-
ռին փոխադրութեան պատմութեան մէջ
կը յիշէ անձի մը տեսիլը, որուն կ'երևին
«բազմութիւնք զօրաց բազմաց անթիւ և
անհամար, սպառազինեալք ամենեքեան
կարմրով, կանանչով և սպիտակով... ասէն՝
Զօրք Էջմիածնին եմք մեք»: 3, Երեմիա
Մեղրեցի 1508ին՝ բառարանին մէջ նա-
րօտին երեք գոյն կը դնէ. «կարմիր, սպի-
տակ և կանաչ ի միասին իսառնեալ»: 4,
Նոովք քհ. ակլայեցի 1764ին կը գրէ՝ թէ
իւր օրեր յինանց կիւրակէները կը կոչուէին՝
սպիտակ, կարմիր, կանաչ ու դեղին:

Հ. Աւիշան աւելի փաստեր չունէր ուրեմն ազգային դրօշի գունոց ի նպաստ, բայց միայն ինձ յանձնածները. զոր թէ ունենար, բնական է խորհիլ՝ թէ որ և է տեղ պիտի յիշէր իւր հնապատմական գործոց մէջ: Իսկ ասոնց արժէքը հասկանալու համար՝ մեծ աշխատութեան պէտք չկայ: Նախ՝ ասոնց մէջ յեղյեղուած երեք կամ չորս գոյներէն բացակայ է կապոյտը, զոր դրօշի գոյներուն մէջ դրած է մեր բանաստեղծը, և անոր փոխան կայ անպակաս սպիտակը: Երկրորդ՝ դժուարին է թէ եղեսացին Արգար իւր եռագոյն մոմերով, և յինանց կիւրակէք իրենց չորս գոյներով՝ բնաւ աղերս ունենան հայ վատին հետ. ոչ ալ Մեղրեցւոյն նարօտը, որ գրողէս դար մը յառաջ երկգոյն նկարագրուած է Տաթևացիէն, կարմիր ու սպիտակ, թէ մկրտութեան և թէ հարսանեաց առթիւ: Երրորդ՝ Մեծոփեցւոյն տեսլեան գոյները «սպառազինութեան» այս ինքն զգեստի յատուկ են, և անոր «զօրք Լշմիածնին» հայրապետական աթոռին պաշտպան հրեշտակներն էին, որոնք կ'երեւի թէ նկարչութեան մէջ զանազան գոյներով կը ներկայացուէին, և այդ գոյներուն կ'ականարկէ Թովմա:

1. Քարոզգիրք, հտ. ամարան, Կ. պոլիս, ՌՃՂ(1741), էջ 203.

Զորքորդ յիշեալ վկայութիւնք ընդհան-
րապէս մեր թագաւորութեան և ազա-
տութեան անկմանէն շատ ուշ գրուած,
չէին կարող հայ ազգային դրօշի մը գո-
յութիւնն ու ձևը հաստատել մեզ: Հին-
գերորդ՝ այդ վկայողաց շրջանին՝ ազգաց
դրօշները չունէին տակաւին, ինչպէս ըսի,
այժմեան ոճով համախմբութիւն գոյնե-
րու, բաց ի կտաւին ու խաչին զոյգ
երանգէն. որով և ոչ մեր գրիչք պիտի
կարենային բազմագոյն վառի մը գաղա-
փարն ունենալ կամ տալ մեզ:

Կ'երեի՝ և բնական ալ է՝ որ Հ. Ալի-
շան իւր յարմարական տեսութեան վրայ
ինքն ալ շատ վատահ չլինէր: Անոր հա-
մար Նոստրոմսկին երկայն տարիներ վերջ
ակնարկելով հին դրօշուց, արքունի սպի-
տակէն զատ՝ ուրիշ գունոց մասին չխօ-
սացաւ¹. Թէև վերոյիշեալ փաստերն Այ-
րարատի տպագրութենէն յետոյ տուաւ
ինձ. նշան՝ թէ անստուգութիւնը կը տի-
րէր միշտ իւր մտաց մէջ: Նկատելով
այս բոլորը, իւր կարծիքն եռագունի
մասին զուրկ կը մնայ պատմական ամէն
հիմունքէ: Եւ ուրիշ բան չէ՝ բայց փո-
խառութիւն այն Դաշնադրութեան ծրագ-
րէն, զոր 1790ին Յովսէփ արքեպ. Ար-

1. Այրարատ բնաշ. Հայաստ. 1890, էջ 416.

զուլթեան իմբագրեց և յանձնեց Ռուս պետութեան՝ իբրև կապ ասոր ու հաստատելի հայ թագաւորութեան միջև։ Հոն կը կարդանք. « 10. Սահմանել կաւալեր լինել տապանն Նոյի. և լենթերն երեք գոյն, կարմիր, կանաչ և կապոյտ ըստ գունոյ աղեղան՝ որ զկնի ջրհեղեղին տուաւ Աստուած Նոյի ի նշան հաշտութեան՝ » ։ Հ. Ալիշան ասպետական կարգի ժապաւենին այս գոյներէն ներշնչուած անկասկած, զանոնք դրօշին մերձեցուց ։

Ինձ ծանօթ է նաև գերման գրող մը, Սարրէ, որ արևելեան դրօշներու վրայ յօդուածի մը մէջ կ'ակնարկէ հայկականին ալ², իրեն ապացոյց առնելով Փաւստոսի յայտնի վկայութիւնը Մամիկոնեանց մասին, զոր չէ յաջողած մեկնել ըստ բաւականի, և խորենացւոյն ըսածն Արծրունեաց պաշտօնին նկատմամբ, որուն պիտի դառնանք թի յօդուածիս մէջ ։ Կը համարի՝ թէ Հայոց վառն յար և նման լինելու էր անծանօթ պարթևականին, որոց և մեր մէջ մեծ էր բարուց ընդհանուր նմանակցութիւնը ։ Բայց իւր տեսութիւնը, համառօտ և անորոշ, նոյնպէս չի գոհացներ զմեզ ։

1. Փորձ հանդէս, Բ տարի, Թ. 1, էջ 383.


2. Sarre ի Klio, 1903, էջ 354-55.

Վերջապէս դիտել տալու եմ՝ թէ մեր պատմութիւնն, այնքան ուշտ հայ հնու-
թեանց հետազօտութեան մէջ մաշած եր-
կար կեանքի մը հանդէպ՝ ինչպէս Հ.
Ալիշանն էր, չէր կրնար չափազանց
առատածեռնել ինձ։ Այսու հանդերձ՝ մաս-
նագիտական աչքով նայելով խնդրոյն
վրայ, կը կարծեմ փոքր ի շատէ որոշ և
ապահով քայլ մ'առած լինել անծանօ-
թին դռնէն ներս, ուր կը սպասեն մեզ
արդարև զանազան նոր ու կարևոր յայտ-
նութիւնք։

Ինչպէս ուրիշ ազգաց, մեր քով ալ
դրօշները կրկին էին. տոհմայինք ու հա-
սարակացը։ Զասոնք զատ նկատենք. և
նախ արքունականքը՝ որ գերագոյն էին
տոհմայնոց մէջ։

Դ. — ԱՐՇԱԿՈՒՆԻՆ։ — Այլուր արդէն խօ-
սած¹, չեմ ուզեր զրադիլ հոս այն խըն-
դրով՝ թէ հայ Արշակունի տոհմը զատելի
է Արտաշիսեան կոչուածէն, որուն կը
պատկանէր և մեծն Տիգրան, ինչպէս ըրին
ումանք, թէ Պետրովիչի և այլոց հետ
Արշակունի անունը տարածելի նաև անու-
անեալ Արտաշիսեանց վրայ։ Իմ տեսա-

1. Պատմ. հին հայ տարագին. Վենետիկ, 1923, 54-57.



կիտով՝ Տիգրանի և յաջորդ Արշակունեաց նշանք մի և նոյն էին, որով և միասին պիտի նկատեմ անոնց դրօշներն իբրեւ շարունակութիւն իրարու:

Կ'որոշուէին իշխանականներէն զունով ու նշանով միանգամայն: Մով. Խորենացւոյն կողմանէ կը յիշուին արդարեւ «նշանք Արաաշխի» (Բ, ԽԶ). և Պարսից արքայն՝ յետ մահուան Պապայ և հաշտուելու Հայոց հետ, Չարմանդուխտ տիկնոջ յղեց «զվառ քաղաքացն», կ'ըսէ Փաւստոս (Ե, ԼԸ): Տեսանք վերեւ՝ որ Հ. Ալիշան սպիտակ կ'երեւակայէր արքունականին գոյնը, հաստատուելով անշուշտ Ստ. Օրբելեանի վկայութեան վրայ, որուն կ'ակնարկէ Այրարատի մէջ ալ (416), թէ ԺԱ. դարուն վերաց արքային յատուկ էր «սպիտակ լինել վառն, և կարմիր նշան ունել»¹ (277): Իսկ նկատմամբ նշանի պատկերին՝ Հ. Ալիշան կը յարէ նոյն տեղ՝ թէ Արշակունեացը «համարի յոմանց սրժոռի, և առ քրիստոնէութեամբ՝ գառն Աստուծոյ»: Նոյնպէս անծանօթին տենչացող, և ենթադրութեան սահմանաց մէջ թափառողներ էին այդ ոմանք, և նոյն ինքն Յով. արքեպ. Արղութեան, որ վե-

1. Ստ. Օրբել. Պատմութիւն տառն Սիսական. Մոսկուա, 1861.

րոյիշեալ Դաշնադրութեան մէջ կը գրէր.
« 13. Յարմարեացի կնիքն թագաւորա-
կան ըստ սովորութեան առաջնոց թագա-
ւորացն մերոց. Արշակունեաց արծիւն մի-
ագլխի՝ որ նախ քան զքրիստոնէութիւն,
գտնե՛ ի ժամանակի քրիստոնէութեան, և
երկու առիւծն ի Փոքր Հայաստան, և
սորօք զարդարեացին հանդերձքն թագա-
ւորաց մերոց, դրօշակքն և դրամք» :

Բայց մեր այդ դիւրին տեղեկութեամբ
չենք գոհանար: Փաւստոս իւր նախայիշ-
եալ լակոնական բացատրութեան մէջ ու-
րիշ գեղեցիկ նորութիւններ ծածկած է
մեզ: Արքայից արքայն մեր թագուհւոյն
կը յղէ « զվառ քաղաւորացն », և չի յա-
ւելուր պատմիչը՝ Պարսից կամ Հայոց.
ոչ ալ կ'ըսէ « թագաւորին », որպէս
զի մէկ կամ միւս կողման հասկանայինք:
Ուրեմն պէտք չկար ճշդելու այս կէտը,
զի երկու արքունեաց դրօշներն ալ հա-
ւասար էին, գէթ ըստ գլխաւոր մասանց:
Առաքողը պարսիկ էր, որով յղածը պարս-
կական էր, ըստ որում հին ժամանակ
արքունի նուէրք առ հասարակ նուիրա-
տուին յատուկ ձևով կը լինէին, ինչպէս
էին նոյն դրօշին յարակից միւս պար-
զէներն ալ, ապիզակ և արծուեկիր շի-
կակարմիր խորան առ Մանուէլ, և այլն

(Նոյն)։ Նուէրն ընդունողը պիտի գործածէր զայն՝ պատուելու համար նուիրատուն, ուրեմն յիշեալ դրօշն յարմար էր նաև հայ արքունեաց։ Եւ էր պարզապէս ընդհանուր « վառ քաղաքացն », այս ինքն երկու կողման արքայից ևս, որոց մէջ ուրիշ շատ նմանութիւնք ալ կային։

1. — Պարսից դրօշին գոյնը ծանօթ է մեզ։ Հնոյն Պոմպէի մէջ գտուած պատերազմական խճանկարի մը վրայ՝ Դարեհի գունդն արքային քով կը կրէ անոր ծիրանեգոյն վառն՝ ոսկի նշանով (Sarre, 351. Darem. IV, 1308)։

Այս խճանկարը չէր կարող հարկաւ մինչև Դարեհի օրերը բարձրանալ։ Բայց իւր ձևը, որ է նշանը կտաւին վրայ զետեղուած՝ հակառակ հոռվմէականին, զայն խակապէս պարսկական ցոյց կու տայ, և է վկայ՝ պարսկական հին ծիրանւոյն ու նշանին պահպանութեան նաև կրտսեր դարերուն։ Սարրէ նման կ'ենթադրէ Դարեհի վառին գունոց՝ Պարթեւացն ալ, թէև ասոր ո և է պատկեր կը պակասի, կըսէ ինքն իսկ (353)։ Նոյն ծիրանին Աղեքսանդր առաւ Պարսիցմէ իւր վառին վրայ (Darem. 1309), ինչ որ Հոռվմայեցիք ալ ունէին պատերազմի մէջ (անդ, 1310). և զոր յետոյ կոստան-

դիանոս հաստատուն պահեց իւր քրիստոնէացուցած դրօշին վրայ (անդ, 1321), և աւանդեց իւր յաջորդաց, ինչպէս կ'երևի անոնց ձևերու մէջ¹։ Մեզ դրացի և բարոք ալ մերձաւոր ազգի մը՝ Աղուանից արքունի դրօշը Ե դարուն՝ կ'աւանդուի մի և նոյն գունով նկարագրուած Պետրոս Սիւնեցիէն Չ դարուն, « կարմիր և ոսկեաւոր լառիւ » , ինչպէս կը գրէ Օրբելեան (17)։ Այս ամէնը կը համոզեն զմեզ՝ թէ ծիրանեգոյն լինելու էր հայ Արշակունեաց դրօշն ալ։ Ասոր ուրիշ պատճառ մ'ալ կայ։ Ծիրանին՝ արևելեան և արևմտեան արքունեաց զգեստին ևս սեպհական գոյնն էր միշտ հին ժամանակներ (Darem. IV, 777-8)։ Նոյնպէս էր և Հայոց մէջ. մեծն Տիգրանի պատմութեանն ու քղամիդը ծիրանեգոյն էին²։ Եւ դարեր վերջ իւր յաջորդներէն մեծն Տրդատ՝ Հռովմայ կայսերէն թագաւոր կարգուելով, տակաւին « ծիրանեօք » կը զարդարուի (Ագաթ. 48), և ըստ Խորենացւոյն՝ նոյնը կը զգեցնէ Աշխենի ևս՝ երբ կ'ամուսնացնէ իրեն (Բ, 29)։ Կարմիր էին Արշակունեաց կօշիկներն անգամ՝

1. Schlumberger, *Un Empereur byz.* 365, 521.

2. Դիոն Կասիոս, հրատ. E. Cros, հտ. Գ, էջ 111.

նման Հռովմայ և Պարսից թագաւորաց .
 և Երուսանդ իրաւունք տուաւ Արգամայ՝
 մէկ կօշիկը միայն կարմիր հագնիլ (նոյն,
 Բ, ԽԷ)։ Արդ՝ եթէ այն դարերու արքու-
 նեաց սեպհական գոյնն ընդունուեր է հայ
 Արշակունիներէն, — զօրութեամբ ինչ ինչ
 սովորութից նմանակցութեան՝ որ կար
 հին քաղաքակիրթ ու հազորդակից ազ-
 գերու մէջ, — տարակոյս չկայ՝ որ պիտի
 ընդունուէր իւր գործածութեան բովանդակ
 սահմանով հանդերձ, ուստի նաև արքունի
 դրօշին վրայ, որ զգեստներէն նուազ կա-
 ընոր չէր արքենի պերճանաց մէջ, ինչ-
 պէս յայտնի է Զարմանդխատյ վերոյի-
 շեալ օրինակէն։

Ինչ գոյն էր ծիրանին։ Վիտենք՝ որ
 Փիւնիկեցիք, Յոյներն ու Հռովմայեցիք
 զայն կը հանէին ծովային յատուկ խը-
 դունջներէ, ըստ որում այսպէս պատ-
 րաստուածք զերծ կը մնար լուսոյ ազ-
 դեցութեամբ այլայլելէ։ Միրանւոյ գոյ-
 նը զանազան աստիճաններ ունէր, որոց
 հիմը մանիշակագոյնն էր, և կը հակէր
 յաճախ դէպ աղօտ կարմիրը։ Բիւզան-
 դացիք նոյնը ժառանգեցին ու պահեցին
 (Darem. IV, 770–73), ուսկից կրնանք
 հետեւցնել՝ թէ Հայոց ծիրանւոյն աղբիւրն
 ալ նոյն էր, գէթ Արշակունեաց օրով։

Ձի Հայք վաճառականութեան մէջ ալ լաւ պիտի ճանաչէին՝ ինչ որ կը կարդային նաև Ս. Բարսղի թարգմանութեան մէջ, թէ «*ուստի՞ իցէ խղունջնաց տալ զծիրանիս թագաւորութեան, որ առաւել անցանէն պայծառութեամբ քան զամենայն ծաղիկըս՝*»։ Եթէ մեր եկեղեցականք անգամ իրենց զգեստները Յոյներէն կը հայթհայթէին (Փարպ. 345), ապա թագաւորք աւելի դիւրաւ պիտի ստանային անոնց ծիրանին։

Այս գոյնը շփոթելու չենք որդան կարմրին հետ, որ կը թարգմանէ յունարէն կոկկինոնը (Ես. Ա, 18), որ հայուն պէս որդէ մը կ'ելնէր, նոյնպէս ազնիւ գոյն նկատուած, և կ'որոշուէր ծիրանիէն (Darem. I, 1265), ինչպէս զատ են Յայտնութեան մէջ եւս «*Բենեզա և ծիրանիս և սրդան*» (ԺԲ, 16)։ Շնորհալին այս գոյնը կը հաւասարեցնէ արեան, ըսելով. «*զորդան կարմիր արեան գունին*» (Ողբերգ. Գ, 34)։ Հետեւաբար ծիրանւոյն սահմանն որոշ է։

Ո՛րքան բազմալի էր ունենալ գէթ ճաշակ մը միջնադարեան ծիրանւոյն, որով ներկուած են Գագիկ Բագրատունւոյ ար-

1. Վասն վեցօրեայ արարչութեանն. Վենետիկ, 1830, էջ 152.

ձանը, և Ռուբինեանց հագուստները գրը-
չագրական պատկերաց մէջ:

2. — Հին վառերու ձեռք զանազան
էր: Հռովմէականը՝ չորեքկուսի, գրեթէ
հաւասարակողմ, և ստորոտն աւարտած նեղ
ոսկի ծոպով (Darem. IV, 1314, 1321):
Նոյնպէս է Դարեհին ալ՝ վերոյիշեալ
խճանկարին վրայ: Իսկ Սասանեանց քան-
դակի մը մէջ՝ Ա. Խոսրովու քով կ'երևի
երիզաձև նեղ ու երկար վառ մը դրօ-
շակլի ձեռք¹: Հաւանօրէն մեր արքունի
դրօշին ձևն ալ հետևեցաւ Պարսից սովո-
րութեան ըստ ժամանակին. և զոր կը
պահանջէ վառերու փոխանակութիւնն ալ
իրենց ու մեր մէջ: Բայց ասոր աւելի
դրական փաստն ունինք: Հռովմէական
դրամներ կան՝ որ կը ներկայացնեն Հա-
յաստանի նուաճումը: Ասոցմէ Ղուկիոս
Վերոսի շինածները, 163-164 թուակա-
նին, ունին զՀայաստան սգաւոր տիկնոջ
մը ձեւով, նստած ի գետնի, և իւր քով
վահան մը և մէկ կամ երկու դրօշներ
կանգուն: Դրօշներէն մին, կրկնուած եր-
կու դրամոց վրայ, է պարզապէս երկար
ծոպ մը, հաստատուած հորիզոնաձև ձող-
կի մը վրայ, և նիզակէ մը կախուած

1. G. Rawlinson, T. S. G. O. M. էջ 612.

դէպ ի վար: Երկրորդը՝ երկար ծոպին վերև ունի անոր տարածութեան չափով հաւասարակողմ պատտառ մ'ալ, և առաջնոյն ոճով կախուած է տիգէ:

Ասոնց ձևը կ'երևի իմ յառաջ բերած դրամի պատկերին վրայ (Ձև 1), զոր առի



Ձև 1. — Գրամ Դ. Վերոսի (25 հզմ):

Հռովմայ պետական հաւաքածոյէն, և որ բնականէն շատ աւելի մեծ է հոս: Համոզուած եմ՝ թէ ասոնք ժամանակի հայկական դրօշներն էին, ինչպէս կը համարի Կոհէն ալ, կոչելով զանոնք կողոպուտ պատերազմի¹. Թէև իրենց մասանց հա-

1. Cohen, *Descript. histor. des Monnaies frappées dans l'Empire Romain*, 1882, տ. Գ, 172, 173:

մեմատութեան մէջ կրնան իրականէն տարբերութիւններ ալ ունենալ. զոր օրինակ ծոպն աւելի կարճ լինել պատահին վրայ:

Յ. — Գալով նշանին, մեք անոր մէկէ աւելի աղբիւրներ ունինք, սկսեալ Խորենացիէն, որ կ'ըսէ վաղարշակայ մասին, և պէտք է որ մեք հասկանանք բոլոր Արշակունեաց համար, մանաւանդ պատմչին մերձաւորաց ժամանակաւ, թէ «արծուիս առաջի նորա կրէին» (Բ, Է): Հոս պէտք չէ սակայն իմանալ վառը, զոր ըստ իւր և հասարակաց սովորութեան՝ «նշան» կամ ուրիշ համանշով մը պիտի կոչէր: Այլ քանդակեալ արծիւներ, յար և նման պարսկական ոսկեզօծ արծուին, զոր տիգի ծայր անցուցած՝ արքային սողնէն կը տանէին ըստ Քսենոփոնի¹, և որ հռովմէական նշանաց մէջ ալ՝ նոյնպէս քանդակեալ՝ ամենէն անուանին էր, սեպհական լեզէոնին. իսկ աւելի կանուխ՝ կ'երևի նոյն ձևն Ասորեստանեայց զրօշուց վրայ, որոց Ասուր աստուածին պատկերն էր (Darem. IV, 1310): Գարեհի վերոյիշեալ վառը նշան ունի

1. Կիւրոս «սնէր իւր զրօշ՝ Թեատարած ոսկի արծիւ մը՝ երկար տիգի մը ծայր, և այս է ցայսօր Պարսից արքային զրօշը» (Կիւրամարզ. Է, ա)։

Նոյնպէս արծիւ մը, — զոր Սարրէ աքաղաղ կարծեց, — ցոյց տալով մէկ կողմը, և գլուխն ուղիղ բռնած: Եթէ արծիւը հայ Արշակունեաց ալ նշանն էր, կը հետեի՝ որ նոյնը կար նաև անոնց դրօշին վրայ:

Արդեօք պատառի երեսին նկարուած կամ հիւսուած էր ոսկեգոյն, ինչպէս է Դարեհի ինճանկարին վրայ, թէ արծուեքանդակը տիգին ծայրը դրուած և կտաւն անպատկեր թողուած՝ նման հռովմէակահին (անդ, 1314): Առաջինը հաւանական կը թուի՝ մեր աւելի մերձաւորութեամբ Պարսից, և նշանակցութեամբ անոնց Արեմենեան, Արշակունի և Սասանեան տանց, որոց ազդեցութեան պտուղն է անտարակոյս արծուին ընդունելութիւնը հայ Արշակունեաց կողմանէ. ուստի բնականապէս նաև անոնց ոճով գործածուած իրենց դրօշին վրայ: Նոյնը կը հաստատէ իմ տուած վերոսեան դրամն ալ, ուր դրօշի փոքրկութենէն թէև նշանն աննշմարելի, բայց ոլովհետև տիգին ծայրը չէ, ուստի պատառին վրայ էր:

Երկրորդ և հնագոյն աղբիւր ի նպատար արծուենշանին՝ հայ Արշակունեաց դրամներն են, և յատկապէս մեծին Տիգրանայ: Դրամոց մէկ երեսին վրայ՝ ինչպէս ծաւ-

նօթ է՝ կը գտնուի արքային կենդանա-
գիրը, և միւսին վրայ՝ սրբազան կամ
խորհրդական պատկեր մը, որ կը փոփո-
խուի ըստ իւրաքանչիւր արքայի ախոր-
ժակաց. և մեք կը տեսնենք հոն Անտիոք
քաղաքն և Որոնտէս գետը՝ կանացի կեր-
պարանօք, քառաձի կառք մը, մարտիկ մը,
ձի մը, փիղ մը և այլն, նման պարթե-
ւական և սելեւկեան դրամոց պատկերաց՝¹
խորհրդաւոր զարդեր էին, և ասոցմէ
ոչ մին կրնայ Արշակունեաց նշանը հա-
մարուիլ, որ որոշ ու միակ ձև մ'ունե-
նալու էր: Մեր նշանն ուրեմն դրամին
հակառակ կողմն որոնելու ենք, և ըստ
իս նոյն ինքն արքունի պատկերին վրայ:
Տիգրանի նախորդք բացագլուխ են իմ
տեսած օրինակաց վրայ՝ զոր Ատրպետ
յառաջ կը բերէ Ազգագր. հանդիսին մէջ
(Գիրք ԻԳ, 42-55): Իսկ Տիգրան թա-
գակիր է միշտ, որոյ ձևը կու տամ հոս
Ս. Ղազարու մէկ բնագրէն (Ձև 2). և
թագի կողին վրայ կ'երևի քանդակուած
մեր ծանօթ արծիւը², որ զոյգ է, կան-
գնած բնական զիրքով, տառերն իրարու

1. W. Wroth, *Catal. of the Coins of Parthia*.—
E. Babelon, *Monnaies des Rois de Syrie, d'Ar-
ménie* եւ.

2. Բազէ կարծուած Ատրպետէ (Ազգգր. Հանդ. 1911,
202):

դարձուցած, ու գլխին յետ շրջած դէպ
ութնառագայթ աստղ մը՝ որ կայ իրենց
մէջտեղ. և է արեգակն իսկ, պաշտուած
երբեմն Հայոցմէ ևս ու փառաբանուած



Ձև 2. — Գրամ Մեծիմ Տիգրանայ (25 հզմ)

Գողթան երգիչներէն՝ ինչպէս Տերառու-
ղիանոսի օրով ու վկայութեամբ՝ Պարս-
սիկներն ալ իրենց դրօշին վրայ նկարած

1. Այդ շրջանին համար ոչինչ կ'արժէ Ֆերաուշի
բանաստեղծին վկայութիւնը Ժ-ԺԱ դարուց միջև, որոյ
համեմատ Պարսից ազգային վառն էր զնդարարձ ձող մը,
ուսկից կը կախուէին մինչև զեօին երեք երիզներ՝ կար-
միր, դեղին ու մանիշակագոյն։ Նոյն ինքն արքունի
մանիշակագոյն դրօշին նշան կը յիշէ արեգակը. թիկ-
նապահաց զնդինը՝ նոյն զունով ու վիշապով. ցիրուցան
կը յիշատակէ նաև իբր նշան՝ առիւծը, փիղը, վագրը,
վիշապը, արծիւը, այծը, լուսինը, արեւը ևն (Sarre, 359)։

էին արևը (Ջատագ. ԺԶ): Թէ Տիգրանայ արծիւը լոկ զարդ մը չեն, յիշենք՝ որ Սասանեանց արծիւն ալ, որոյ համար զանոնք նշանակից ըսի մեր Արշակունեաց, արձանակերպ նստած էր անոնց թագին վրայ, ինչպէս կ'երևի Ռաւլինսոնի յառաջըրութեանց մէջ (103, 109, 266). ու Պարթևաց թագին վրայ քանդակուած կը տեսնենք ճիշդ Տիգրանի աստղը (Wroth, տխ. 8, 10, 11), որ Ասորեստանեայց քով ալ աստուածոց թագերուն վերև զետեղուած էր՝ իբր անոնց յատուկ նշան¹: Մեր քով ևս Արծրունին Մերուժան ունէր «զնշանն սաղաւարտին» վրայ (Փաւս. Ե, ԽԳ). և նոյնը կը հաստատէ Մամիկոնեան Մանուկի օրինակն ալ՝ զոր պիտի տեսնենք իւր կարգին:

Արդեօք Տիգրանի նշանը մեր տեսածին պէս բարդ էր դրօշին վրայ ևս, թէ միակ արծիւ մը: Հաւանօրէն առաջինն էր, նկատելով նոյն բարդ նշանին կրկնութիւնը Տիգրանի բոլոր դրամոց վրայ՝ զորս ձուլեր է այլ և այլ ժամանակներ, ինչպէս տեսայ Ս. Ղազարու հաւաքածոյին մէջ և այլուր, և անոր թագին ու պատկերին եզականութիւնը, որով իւր նմանը չունի

1. V. Place, *Ninive et l'Assyrie*. հտ. Բ, 158-60. հտ. Գ, տխ. 45.

ուրիշ դրացի ժամանակակից ազգաց մէջ¹.
 Ինչպէս նաև նոյն ձեւին կրկնութիւնը
 Տիգրանի յաջորդաց խոյրերուն վրայ (Պատմ.
 տրգ. 70), և բարդ նշանաց գոյութիւնն
 ուրիշ ազգաց քով ալ (Darem. IV, 1308).
 Թէև հարկ չէ կարծել՝ թէ Տիգրանեանը
 նոյնպէս բարդ մնաց մինչև վերջ: Տիգրան
 Դ արծիւը (միակ՝) կը զետեղէ իւր ետև
 (Պատմ. տրգ. 67), նմանութեամբ Պարթևաց
 Գ. փրաատի (անստոյգ), Թագ. 70-57,
 որոյ արծիւն ի թռիչս է, և պսակ մ'ունի
 կացին (Wroth, տիւ. 2), ինչպէս է Տիգ-
 րանինն ալ: — Իսկ Պարսից և Աղուանից
 վերոյիշեալ օրինակները կը թելադրեն
 խորհիլ՝ թէ մեր նշանն ալ ոսկեգոյն կամ
 ոսկեհիւս էր. զի ոսկին մին էր արքա-
 յական ճոխութեան նշանակաց, յայտնի
 հետագայ վկայութիւններէն ևս՝ զոր պիտի
 տեսնենք:

Ոչ մէկ ականարկութիւն, և ոչ հաւա-
 նականութիւն կայ՝ թէ Արշակունիք քրիս-
 տոնէութեան շրջանին փոխեցին իրենց
 աւանդական նշանը Գառին: Յիշեցինք վե-
 րեւ՝ որ արքունի գահուն դատարկութեան
 պահուն՝ անոր ինամակալը Մանուէլ՝ Պար-
 սից արքայէն ստացաւ «Թագաւորական»

1. Այս մասին խօսած եմ Հայ տարագի պատմու-
 թեանս մէջ, 68:

նուէրներ, որոց մէջ նաեւ «շիկակարմիր խորան, և ի վերայ խորանին արծուի նշան» (Փաւս. Ե, ԼԸ). ապացոյց՝ թէ ինչպէս շիկակարմիրը, արծիւն ալ յետ քրիստոնէութեան դեռ ևս սեպհական կը մնար այն զահուն՝ որուն կը խնամարկէր և որոյ նշանակներով կը մեծարուէր Մամիկոնեան սպարապետը: Եւ Խորենացին Արշակունեաց արծուենշանն աւելի կենդանի սովորութենէն կը ճանաչէր քան հինէն: Կարծեցեալ Գառն՝ արեւմտեայց քաղաքական հին դրօշուց վրայ ևս անձանօթ է: Նաեւ Օրեր՝ որ գառին զանազան խորհրդաւոր գործածութիւնքը կը յիշատակէ, մինչև եպիսկոպոսական զաւազանին ծայրը, չի ճանաչիր զայն դրօշուց վրայ¹: Որով Արդութեանի յիշեալ կարծիքը չունի որ և է պատմական հիմ:

4. — Վառին ուշագրաւ մասերէն մին ալ էր զայն բարձող թռեւը, որ յառաջագոյն նիզակ մ'էր անկասկած՝ ըստ հասարակաց սովորութեան ու Գարեհի ծանօթ օրինակին, և զոր մեր քով ալ կը տեսնենք ուրիշ դրօշներու վրայ (աստ, Է, 4). ինչպէս նաեւ վերոսեան հայ ձեւերուն (աստ՝ 25), ուր նիզակին ծայրը՝ բնագրին փոքրկու-

1. Auber, *Hist. du Symbolisme religieux*. Paris. 1870.

թենէն անորոշ մնացած է միոյն վրայ,
բայց շատ որոշ՝ միւսին: Գարեհի վառն
ու հոռվմէական շարարուսը նիզակէն վար
կախուած են. և Բիւզանդացիք պահեցին
մի և նոյն ոճը, հետեողութեամբ հոռվ-
մէականին՝ զոր ընդունեցան ժառանգու-
թեամբ: Իսկ Սասանեան Ա խօսքովու վե-
րոյիշեալ երիզաձև վառն հաստատուած
է ձողին երկայնութեան վրայ ու հովէն
կարկառած հորիզոնաձև: Սոյն ոճն ընդ-
հանուր էր ապա յԱրեմուտս ալ, ինչպէս
կ'երևի անոնց հին ձևերու մէջ, որոցմէ
իրր հնագոյն ծանօթ են ինձ Գաղիոյ մե-
ծին Կարտլոսի դրօշներն Բ դարէն¹: Ան-
շուշտ հայ Արշակունիք իրենց դրօշին
ձևին համեմատ՝ հետեեցան թէ մէկ և թէ
միւս կերպին: Միոյն վկայ է արդէն վե-
րոսեան դրամը:

Ե. — ԲԱԳԲԱՏՈՒՆԻՆ: — Ժամանակաւ
մեզ աւելի մօտաւոր թագակալք Անույ՝
համեմատաբար նուազ բախտաւոր են այս
մասին՝ քան հեռաւոր Արշակունիք: Ահա
ինչ որ գիտենք անոնց դրօշին նկատմամբ:


1. — Մեր հին թագաւորաց ծիրանին
ընդունուեցաւ ու մնաց Աշոտոյ տան զգես-
տուց ալ յատուկ գոյնը, որուն զանազան

1. G. Desjardins, *Recherches sur les Drapeaux
Français*, Paris. 1874 էջ 120. տխ. 1 են.

ապացոյցներ ունիմ, տեսանելի յիշատակած աշխատութեանս մէջ (Պատմ. տրդ. 182, 186): Հակամէտ եմ խորհելու՝ թէ ադորհետ առին անոնք իրենց նախկին թագակալաց դրօշին, գոյներն ու նշանն ալ: Արդէն այս մասին բաւական յայտնի՝ թէև կիսամասնեայ՝ վկայութիւն մ'ալ ունինք Յովհաննէս պատմագրէն, որ Աշոտ Երկաթի համար կ'ըսէ՝ թէ Բիւզանդիոնի կոստանդ կայսերէն պատուեցաւ «ոսկեատուռն վառիւք» (ՄԵ): Չենք կարող կասկածիլ՝ թէ այդ վառերը միանգամայն կը կրէին նուիրատուին յատուկ ծիրանի գոյնն ալ, զոր պատմիչն աւելորդ համարելով յիշեցնել մեզ, կը հաստատէ լռելեայն՝ թէ Բագրատունեաց ևս շատ սովորական էր այն: Իսկ ոսկի տուռնը, որ է բիւզանդականին ծանօթ ծոպը, նոր էր իրենց համար և յիշատակելի, ուր Երկաթի նախորդացը հետեարար պարզ էր ու երկայնաձև: Տեսն ոսկին՝ ոսկեգոյն ենթադրել կու տայ մեզ նշանն ալ, որ նոյնպէս էր բիւզանդականին վրայ ևս. և անշուշտ այս պարագայն կ'իմանայ նոյն պատմիչը, երբ կ'ըսէ՝ թէ Ա. Աշոտոյ դագաղը զարդարուած էր «ոսկեզօծ վառիւք» (ԻԹ): Ուրեմն ոսկին Բագրատունեաց թագաւորութեան սկիզբէն կար: Մեք անցնինք տեսնել նշանին ձևը:

2. — Անույ կաթողիկէն, սկսած Սմբատայ ձեռօք 980ին և աւարտած կատարանիդէ դշխոյէն, իւր գլխաւոր ճակատին վրայ՝ մեծ պատուհանին երկու կողմէն ունի մէկ մէկ արծիւ, կանգունք դէպ ի վեր, ցուցնելով իրենց կուրծքը, և լայն թևերը բացած ու կախ: Իւր պատկերն յառաջ կը բերեմ՝ միաբանակցիւմ՝ Հ. Գ. Վ. Նահապետեանի ամենափոքր լուսանկարէն (Ձև 3), որոյ անորոշութիւնք կըրկնուած են իմ տուածիս վրայ: Նոյն արծիւը՝ թուով մէկ՝ կայ նաև ոստանին Ս. Փրկչի գմբեթին կողին վրայ (նոյն). և տաճարս շինուած է Պահլավունի Ապրւղարիպ մարզպանէն 1035ին: Ի՞նչ կը նշանակէ այս ձևը, յար և նման միշտ, և այն ալ Բագրատունեաց քաղաքին մէջ միայն և անոնց օրով: Եւ եթէ իբր գարդ դրուած է, ինչո՞ւ արծիւ և ոչ ուրիշ անասուն մը. և կամ ինչո՞ւ արծիւ մը լոկ, և ոչ ուրիշ անասներով միասին, ինչպէս կը տեսնենք յետոյ հոն՝ Ս. Գրիգորի վրայ, կառուցուած 1215ին՝ Բագրատունեաց անկմանէն վերջ, Հոնեց Տիգրանայ ձեռամբ, ուր արծիւը դրուած է բարձր՝ գմբեթին պատին վրայ, որոշ դիտաւորութեամբ մ'օրինակուելով նախորդներէն, և տաճարին կիսասեանց կամարներու վրայ ևս

կան կենդանիք. և ինչպէս Աղթամարայ Ս. Խաչն ալ, աւարտեալ 921ին, բազմակերպ ձեւերով զարդարուած է: Այս խորհրդածուծիւնք կը մղեն զիս՝ Շիրակայ ոստանին արծուոյն վրայ պատահական ձևէ տարրեր բան մը նշմարելու. Բազրատունեաց նշանն իսկ, նմանողու-



Ձև 3. — Արծիւ կաթողիկէին Անույ:

Թեամբ Արշակունեաց օրինակին, ինչպէս ըսի: Այս պատճառաւ ալ թռչունը կը պահէ հոն իւր բնական ձևը, հակառակ սերիշ երկզլուիս արծիւներու՝ քանդակուած առ ի զարդ՝ զորս պիտի տեսնենք յետոյ: Այս համոզումս կը հաստատէ նաև Մինաս համթեցի, որ թէև ժամանակաւ կրտսեր (1698ին կը գրէր), այլ նիւթին տեղեակ,

խօսելով Ռուբինեանց նշանի մասին, կը յարէ. « Իսկ առաջին թագաւորքն Հայոց որ ի հիւսիս՝ զարծիւ նշան կրէին »¹։ Այդ հիւսիսային թագաւորք, քան զՌուբինեանս « առաջին », Բագրատունիք էին։

Անոյ արծուեքանդակը մեզ կու տայ բնագրին (թռչնոյն) գաղափարը, բայց ոչ ճիշդ նմանութիւնը, որ ճարտարագոյն արուեստաւորի մը ձեռքէն անշուշտ աւելի կատարեալ ձևով մը պիտի ելնէր։

Նուազ կը գրաւէ մեր ուշը՝ քաղաքին պարսպաց աւագ դրան վերեւ քանդակուած առիւծը, երբ նկատենք՝ թէ այդ պարիսպները մէկ անգամէ աւելի քանդուեր ու շինուեր են յետ Բագրատունեաց², և ընկած զանազան տիրապետութեանց ներքեւ. որով և առիւծն ու շինողն անյայտ, թէև հաւանօրէն օտար մը։ Զոյգ առիւծներ՝ մէջտեղ արևով, քանդակուած կան Նիբելկերտի (Ֆարկին) մօտ՝ աշտարակի մը պատին վրայ, որ շինուած է սուլտան Մալիք էւ Աշրաֆի օրով, 1203ին. և առիւծն յետոյ Սելճուգեանք ալ իրենց նշան ըրին³։ Արդէն չէին կարող Բագ-

1. Ազգաբանոչքիւն Հայոց. Վաղարշապատ, 1870, էջ 42.

2. Հ. Վ. Աւելան, Շիրակ, էջ 40-44.

3. Lehmann-Haupt, Materialien zur älteren Geschichte etc. Berlin 1907.

րատունիք երկու անջատ և աննման նը-
շաններ միանգամայն ունենալ. և օտար յի-
շատակ մ'է Անուոյ առիւծը:

3. — Գալով դրօշակիր ձողին, անոր
հանգամանքները նոյն կը կարծեմ թու-
թինեանց ունեցածին հետ՝ զոր պիտի տես-
նենք ստորև: Իսկ վառը համարելի է
դէպ ի վար կախուած՝ նման բիւզանդա-
կանին (աստ, 1). գոնէ այսպէս էին աներկ-
բայապէս կայսերէն ընդունուածները, մինչ
յառաջ տոհմային իշխանական ժըր կա-
պերով պնդած էր վառը բնին (աստ, 1, 4):

2. — ՌՈՒԲԻՆԵԱՆԸ: — Ասոր տարերքն
համեմատաբար աւելի որոշ են՝ շնորհիւ
զանազան աղբերաց զոր ունինք: Հ. Ալի-
շան նկարած է զայս Լեւոնի կենդանա-
գրին քով՝ սպիտակ գունով, և նշանը՝ կար-
մրագոյն առիւծ՝ կանգուն յետին ոտից
վրայ և մարմինը վեր բարձրացած (Ախ.
435): Սպիտակն արդիւնք է իւր ծանօթ
ենթադրութեան (աստ, 18), որ չի կրնար
հաստատուիլ, և առիւծին ձեն՝ ըստ հա-
ճոյս, որոյ մասին կը լռէ իսկ հոն՝ որ
բուն տեղն էր նկարագրելու (անդ, 481):
Իրականը սակայն տարրեր կը կարծեմ ես:

1. — Ռուբինեանց զգեստուց արքու-
նական գոյնն էր աւանդական ծիրանին,
զոր նոյնպէս մատնացոյց ըրած եմ այլուր

(Պատմ. տրդ. 242): Նոյն գունով կը դնէին անոնք իրենց ստորագրութիւնն անգամ հրովարտակաց ներքե՝ նման Բիւզանդացւոյ¹: Այսքան սերտ նմանողութիւն մը Բիւզանդական բարուց՝ կը պահանջէ ար-



• ջի 4. --- պնիր մեծիմ Ղևնի (38 հզմ):

դարեւ ամբողջական գործածութիւնն անոնց և միանգամայն մեր նախկին թագաւորութեանց ծիրանւոյն. ուստի նաեւ իրենց զրօշին վրայ: Մանաւանդ որ նմանագոյն վառի մ'ալ կը պատահինք անոնց շրջա-

1. Հ. Ղ. Ա. Սիսուան, էջ 388, 402.

նէն, հանդերձ ասկեցոյն նշանով¹. և նոյները Սիւնեաց պատմչէն կը ծանուցուին իբրեւ թագաւորականք, որոց մասին աւելի վար:

Այս վառը միանգամայն տոնաւոր ալ լինելու է՝ ըստ սովորութեան ժամանակին, ինչպէս կը տեսնենք Գաղիացւոց քով, սկսեալ մեծին Կարուղոսի օրերէն, ուր տուտնը ճեղքուած է երեք, երկու, հինգ և այլ մասանց (Desjar. տխ. 1 ևն). թէև կային վերջերն առանց տատն ալ (նոյն, տխ. 3, 4): Երկնիդ վառի մ'օրինակն ունինք արդէն Ռուբինեանց ժամանակէն, հոս վերեւ յիշածս իսկ՝ զոր յառաջ բերած եմ (Ձև 5):

2. — Ռուբինեանց նշանը թագաւորութենէն յառաջ հաստատուն ձև մը չունի իրենց փոքրամիտ դրամոց վրայ. զոր օրինակ՝ անոնց մին իաչ մը կը կրէ, և ուրիշ մը՝ բերդի վանդակազուռ մը² (Սխ. 378): Մեծն Լևոն՝ առաջին պատկաւոր, որ դեռ իշխան՝ իաչն ունէր դրամին վրայ (անդ, 483), հարտար մտածութեամբ մ'իւր

1. Պիծակ Սարգսին՝ զոր պիտի տեսնենք, և որոյ ազդեցութիւնը գգաւի է Հ. Աւիշանէն հնարուած լեռնեան խաչադրօշին վրայ (Սխուշան, 435):

2. Թերեւս ազոր ազդեցութեան ներքեւ Հ. Աւիշան Լևոնի դրօշներէն միոյն նշան դրաւ բերդ մը (անդ, 435):

անուէնէն իսկ (Leo), ինչպէս կը կարծեմ, հանեց արքայական նոր նշանը, որ էր առիւծը, անխախտ դրոշմուած այնուհետեւ իւր դրամոց վրայ: Վերոյիշեալ Համթեցին կը հաստատէ առիւծնշանին գոյութիւնը, մինչդեռ ասոր ծագման մասին ըսածն ենթադրական է միայն, երբ կը գրէ մեծին Լեոնի նկատմամբ. « Կայսերքն ըստ անուանն առիւծ առմա (լատ. arma, նշան) առաքեցին ամա, զոր բարձեալ ի վերայ դրօշի իւրոյ՝ առաջի իւր ընթանայր. և այս նշան դրօշի սեփականեալ մնաց ի Հայս մինչև ի սպառել թագաւորութեանս Կիլիկեցոց » (էջ 42):

Ստոյգ ձեւը դրամոց վրայ որոնելու ենք: Ասոնց մէջ հնագոյնն է անշուշտ օծման առթիւ ձուլուածը: Հոն առիւծը կանգնած է երկայնութեամբ չորս թաթերուն վրայ, գլուխը դէպ յաջ ու թագապսակ, ձետը վեր շրջած, և իւր ետեւ արքունի խաչագլուխ գաւազանը՝ կրկնակարգ խաչով¹: Նոյնն օսկեդրամի մը վրայ դէպ ի ձախ դարձած է (Սիպիւ. 7). իսկ օսկեկնքոյն վրայ, որոյ պատկերը վատիկանի լաւագոյն բնագրէն յառաջ կը բերեմ (Ձև 4), բռնած է բունէն յիշեալ գաւազանը միա-

1. Հ. Կ. Սիպիւեան, Գրաստչոր. Ռուք. Գրամոց, Վիեննա, 1892, էջ 9:

խաչ գլխով, որ իւր ներքե փոքր գունդ մ'ունի: Կան նաև զոյգ առիւծներ անթագ գլխով, որոց միջև կանգնած է կըրկնակարգ խաչը, և իրենք՝ քամակն ու ցըռուկ անոր դարձուցած են (աստ 3): Կան ալ՝ որ իրր պատկեր ունին առիւծին թագապսակ գլուխը միայն (Սիպիւեան, 21, 22): Ասոնք պարզապէս ձուլող արուեստաւորաց կամ խնդրողին խաղերն էին, հետեւողութեամբ եւրոպականաց՝ որ կային այն ժամանակներ, որոցմէ ես իսկ տեսայ. և իսկական ու միակ ձևը, որ սովորաբար կ'երևի Լեոնի յաջորդաց դրամներու վրայ ևս, է անտարակոյս քաղապսակ առիւծը՝ խաչագլուխ գառագանով, և զայս համարելու ենք նաև Ռուբինեանց վառին նշան, — հակառակ Արդութեանի՝ որ զոյգ առիւծը կը կարծէր (աստ՝ 19), — ըստ որում քան միւսերն աւելի կատարեալ արքունի նշանակներով և ընդհանուր էր. և միանգամայն սեպհական կնքոյն ալ, որ կարեւորութեամբ քան զդրամները բարձրը, աւելի հաւատարիմ վկայն է թագաւորական նշանին:

3. — Պէտք է սակայն դիտել՝ թէ ասոր մէջ գաղափարի եզականութիւն չկայ: Գրեթէ բոլոր գերմանական պետութիւնք իրենց նշանաց մէջ ունին հին աւանդու-

Թեամբ առիւծ մը կամ արծիւ մը՝ պատկուած իրենց յատուկ թագերով, ինչպէս Ռուբինեանցն իրենցով. նոյնպէս ուրիշ արեւմտեան շատ տէրութեանց քով կը տեսնենք այսօր թագապսակ առիւծը։ Եւ ինքս Եւրոպայի զանազան վայրեր հին քանդակաց մէջ նկատած եմ առիւծին քով նաեւ արքունի գաւազանը, բայց շուշանագլուխ։

Ճշդեւու համար՝ ո՛րքան հին են աղոնք, և ի՛նչ չափով ազդեցութիւն գործած Ռուբինեանց նշանին վրայ, հարկադրեցայ մանր խուզարկութիւն մը կատարել, որոյ արդիւնքն է հետեւեալը։ Առիւծն իբր նշան տոհմի և պատկեր դրամի, բայց ոչ թագապսակ, տեսայ Լեոնի թագաւորութենէն (6 Յնր. 1198) յառաջ՝ եւրոպացի արքունեաց ոմանց քով՝ ԺԲ դարու մէջ, քան զոր կանուխ չենք հանդիպիր այս նշանին եւրոպեան դրամոց վրայ։ Չայն կը կրեն իրենց դրամոց երեսին, ժամանակագրական կարգաւ, Եւստաք Գ Կոմս Բուլղոնիոյ¹, որ իշխեց 1093–1123 տարիներուն. Հենրիկ Ե Գերմանիոյ՝ թագ. 1106–25ին². Ալփոնս Է Սպանիոյ՝ 1126–

1. Engel et Serrure, *Traité de Numismatique du Moyen âge*, Paris 1891. հտ. Բ, 498.

2. H. Ph. Cappe, *Die Münzen der deutsche Kaiser und Königen*, Dresden, 1848. հտ. Ա, տխ.Ը, 129.

1157ին (Engel, Բ, 818, 819). Հենրիկ Առիւծ՝ դուքս Բրունսուիկի՝ 1139 էն քիչ վերջ շինածին վրայ (անդ, 667). Գոփուեդ Գ. դուքս Բրաբանտի՝ իշխ. 1143-90ին (անդ, 567). Փերդինանդ Բ Լէոնի՝ 1157-88ին (անդ, 821). Ռաուլ Զենրինգենի՝ տէր Հերստաւի՝ 1167-91ին, որ ուրիշ դրամի վրայ անպսակ արծիւն ալ ունի (անդ, 576). և Ալփոնս Թ. Լէոնի՝ 1188-1230ին (անդ, 822), Դրմէի՝ յառաջ կը բերէ Գաղիոյ զանազան արքունի և իշխանական ձևեր՝ 1170, 1177, 1181, 1189, 1195 տարիներէն, որոց վահանները կը կրեն առիւծի և արծուի նշաններ, և դեռ պսակ չունին (էջ 114, 129, 130, 191), ինչպէս անպսակ առիւծներ կան նաև կնքոց վրայ՝ 1195, 1197, 1199 տարիներէն (194, 191):

Պսակազւուիս առիւծը կ'երևի նախ ըԱպանիոյ վերոյիշեալ Լ. Ալփոնսի դրամներէն ոմանց², ապա Հենրիկ Առիւծի որդ-

1. Demay, *Le Costume au moyen âge*, Paris, 1879.

2. Բոլորշի մաշած պսակով մը (A. Heiss, *Descripcion general de las Monedas Hispano-cristianas*, Madrid, 1865, տիւ. Ա, 7. Բ, 8), որ կ'երևի նաև Թագաւորաց ոմանց գլխին՝ զնդաձև ճառագայթներով (տիւ. Գ, 2, 3 էն),

ւոյն՝ Հենրիկ Երկայնի, իշխ. 1195-1227ին, դրամոց մէկ մասին վրայ, ուր այլք ունին զեռ անպսակ առիւծը (Engel, Բ, 667): Օրինակ չի տար հեղինակս Երկայնի դրամոց, բայց ունի զնդաճառագայթ պսակով առիւծ մը, « ոմանց » կողմանէ վերագրուած Լոյենրոդի դքսութեան, ժիզարուն, որ նմանութիւն է՝ կ'ըսէ՝ նոյն Հ. Երկայնի պսակաւորին (անդ, 668): Պսակագլուխը կը կրէ իւր դրամոց վրայ նաև Ստտոյ Դ Գերմանիոյ՝ 1198-1218ին, որոյ առիւծն անգամ մ'անպսակ է (Cappe, հտ. Ա, տիւ. ժ, 165). մերթ միակ է, կանգնած նման Լեոնի առիւծին, և պսակը զնդաճառագայթ (նոյն, Բ, ժի, 98-107. ժԳ, 108-114). մերթ զոյգ՝ երես երիսի (Ա, ժ, 162. ժԱ, 171, ժԹ, 320). և անգամ մը միակ ու թևաւոր (Ա, ժ, 164). մինչդեռ Փիլիպպոս Գերմանիոյ՝ 1198-2208ին՝ ունի պսակաւոր արծիւ մը (Ա, ժ, 160): Այնուհետև շատ կը տարածուի պսակագլուխ առիւծը, ինչպէս կ'երևի դրամոց վրայ Բ Ստտակարի՝ մարգրաւ Մորաւիոյ՝ 1247-53ին (Engel, Բ 882), Բոհեմիոյ իշխեցողաց՝ նոյն շրջանէն (անդ, 880), Բաւիերայի՝ նոյն դարու վերջերէն (անդ, 7 62), և յետոյ ուրիշ շատերու: Ասոցմէ քան զԼեոնին կանուխ է Լո-

յենրողին, բայց լոկ թուիք մը «ոմանց»,
 և անգոր՝ ըստ որում նմանողութիւն է
 Հենրիկ Երկայնի դրամոց: Վերջինս ալ
 թէև երեք տարի յառաջ թագաւորած քան
 զԼևոն, բայց համոզուած եմ՝ թէ սկսած
 է իւր անպսակ առիւծով, և յետոյ վեր-
 ածած պսակաւորին, վասն զի անկատար
 ձևը կանուխ է միշտ քան զկատարեալը՝
 որ տիրապետող դարձաւ, ինչպէս տեսանք:
 Այսպէս մեծն Լևոն ալ դեռ չօծուած,
 ինչպէս կը համարիմ, թէև պատուով թա-
 գաւոր (Սխառան, 469), տակաւին ունէր
 անպսակ առիւծը (անդ, 380): Ոստոյ Դ
 Գերմանացւոց, որուն նոյնպէս յատուկ է
 պսակազլուի առիւծը, թէև մեծին Լևոնի
 օծման տարւոյն, բայց յետ ասոր թագա-
 ւորած է, որով իւր դրամն ալ յետնագոյն
 է քան զմերը:

Հ. Ալիշան խնդիր յուզեց մեր արքա-
 յին օծման թուականի մասին: Ռուբի-
 նեան արքունի պատմիչը զայն կը դնէ
 «ի թուին Ուիշ, յամսեանն յանուարի՝
 յօր Յայտնութեան Տեառն» (Սխառան,
 470): Նոյն թուականը կը նշանակէ և
 Լամբրոնացին՝ որ ներկայ էր օծման ի
 Տարսոն՝ իւր եկեղեցւոյն մէջ (անդ, 469).
 և ինք վախճանեցաւ ի 14 յուլիսի 1198.
 և թագին նուիրատու Գերման կայսրը

մեռաւ ի 28 սեպտ. 1197, յետ յղելու նոյն տարւոյն մէջ թագն ու նուիրակը, զոր արքունի պատմիչն ու Հեթում՝ եղբայր Լամբրոնացւոյն՝ կը նշանակեն ՈԽԶ թուին (անդ, 470), որ կը համապատասխանէ 1197ին, և օծման ՈԽԷ տարին՝ 1198ի Յայտնութեան: Իսկ Հ. Ալիշան կ'ուզէ 1199ի Յայտնութիւնն իմանալ, նկատելով որ ժամանակի շարժական տոմարով հայ տարին կը սկսէր յունուարի 31ին, որով ՈԽԷ տարւոյն Յայտնութիւնը 1199ի յունուարի 6ին կը հանդիպեցնէ: Այս պատճառաւ ալ կը հարկադրի կրկին օծում գնել Լեոնի. մին՝ Լամբրոնացւոյն կենդանութեան և յիշուած անորմէ, և միւսը՝ յետ անոր մահուան (անդ, 469): Պատուական տեղագիրը չէր յանգեր այս դժուարին հետևութեան, ոչ ալ կայսեր նուիրակն աւելի քան տարի մը պիտի սպասեցնէր ի զուր Կիլիկիոյ մէջ, եթէ նկատած լինէր՝ որ այդ ժամանակ հաստատուն տոմարն ալ հաւասարապէս ի գործածութեան էր, ինչպէս կը տեսնենք՝ զոր օրինակ՝ Կիրակոսի հայ և լատին ամսոց զուգադրութեանց մէջ¹ (199, 213): Հետևաբար Լեոնի օծումն հաստատապէս 1198ի Յայտնութեան եղաւ, և նոյն առ-

1. Կիրակոս պատմիչ, Վենետիկ, 1865.

թիւ կոխուած դրամն ալ՝ պատկազլուի առիւծով՝ հարկաւ 1197ի վերջին ամսոց մէջ յանձնարարուած ու շինուած էր։

Որով մեր վերոյիշեալ քննութենէն կըրնանք հետեցնել՝ թէ լեոնեան պատկաւոր առիւծէն յառաջ կար դրականապէս միայն Սպանիոյ Լ. Ալփոնսինը։ Լեոնեանն ունի նաև արքունի խաչագլուի գաւազանը՝ զոր չենք տեսներ յիշեալ օտար դրամոց վրայ, բաց ի միոյն՝ որ կը պատկանի մի և նոյն Ալփոնսի, թագ. 1126-57ին՝ ինչպէս ըսինք վերև, և ուր գաւազանը կը գտնուի անպատկառ առիւծին հակառակ կողին, աւարտած մի և նոյն եռանկիւնաթև խաչով (Heiss, տիւ. Բ, 19)։ Լեոն կրնց արգեօք այդ դրամոց ազգեցութիւնը, շատ կարելի է։ Բայց ստոյգ է՝ որ իւր նշանին բաղադրութիւնը, որ է գաւազանը՝ միացած պատկազլուի առիւծին հետ և անոր թաթին մէջ, ու դուրս դրուած, եզական է, և հաւանաւորապէս Լեոնի գիւտը, քան զոր յառաջ չյաջողեցայ գտնել Եւրոպացւոց քով։

4. — Մեծն Լեոն արքունական դրօշէն զատ նուէր ստացաւ իննովկենտ Գ. պապէն « զվառ երանելւոյն Պետրոսի », ինչպէս կը գրէ քահանայապետն իսկ անոր ուղղած թղթին մէջ, « որով՝ կ'ըսէ՝

վարեացիս ընդդէմ թշնամեաց խաչին և եթ,
 և գուն գործեացեա զհակառակութիւն նո-
 ցին օգնութեամբն Աստուծոյ և օժանդա-
 կութեամբ իշխանին Առաքելոց սանձա-
 հարել» : Թագաւորը պատասխանելով՝ շը-
 նորհակալ կը լինի, և կ'ըսէ թէ «տացուք
 տանել ցանգ առաջի մեր ընդդէմ թշնա-
 մեաց խաչին, ի պատիւ սրբոյ Հոովմէա-
 կան եկեղեցւոյ»¹ : Ըստ եւրոպացի մաս-
 նագիտաց՝ Ս. Պետրոսի դրօշը կը շնոր-
 հուէր արքայից՝ ի ցոյց մեծարանաց ու
 սիրոյ, և իրեն նշան ունէր Առաքելոյն
 կենդանագիրը և կամ խորհրդաւոր բա-
 նալիները : Եւ զատ էր աստի Պետրոսի
 ու Պաւղոսի կենդանագրովք խառն դրօշը²,
 զոր Հ. Ալիշան փոխան առաջնոյն ի ցոյց
 կը դնէ այս առթիւ (Սխռշան, 491), մինչ-
 դեռ Լևոնի կենդանագրին քով շինած է
 բանալեաց դրօշն իսկ (անդ, 435) : Նկա-
 տելով որ այս պարզէն անձնական էր
 միշտ, հաւանական չէ՝ որ Լևոնի յաջորդ-
 ներն ալ պահած լինին զայն :

Տեսած եմ և վերջին Լևոնի մէկ կնքոյն
 ձևը, որոյ վրայ կայ շատ բարդ նշան
 մը, Հայաստանէն հեռանալէ վերջ ստա-

1. Ա. Կղ. Գալանտի, հտ. Գ, 362, 363 :

2. G. Moroni, Dizio. Storico-eccl. Stendardo.

ցած նոր տխրոսներու համեմատ¹, մինչդեռ իւր կիլիկեան դրամները սովորական առիւծնշանը կը կրեն (Սիպիլ. տխ. 2): Եւ որովհետեւ այդ կնիքն աքսորման շրջանին ու Եւրոպայի մէջ շինուած է, մեզ համար չունի ազգային կարեւորութիւն: Հետաքրքիրը զայն կարող են տեսնել կոչած տեղւոյս մէջ:

Ծ. — Աշտարութեան արժանի է Ռուբինեանց վառին բունն ալ, որ նիզակէն տարրեր բան մ'էր: Ստ. Օրբելեան Աղուանից արքայական դրօշին վերոյիշեալ (էջ 21) նկարագիրը Պետրոս Սիւնեցիէն՝ կ'ամբողջացնէ գրելով. « ունելով ի գլուխն զունդ ոսկի, և ի վերայ (գնդին) խաչ պատռական», զոր Աղուանից արքայն Սիւնեաց եպիսկոպոսին ալ կրելու իրաւունք կուտայ (17, 39): Պիտի ցուցնեմ յետոյ՝ թէ Պետրոսի վերագրուած այդ տեղեկութիւնը կեղծ էր, հաւանօրէն հնարուած Ժդարուն, յորում սկսաւ յուզուիլ Սիւնեաց մետրապոլիտութեան խնդիրը, և յօրինուեցան ուրիշ կեղծ յիշատակագիրք ի նպաստանոր, որոց մասին ընդարձակօրէն խօսած եմ այլուր²: Թ զարուն հաստատուեցաւ

1. Schlumberger, *Mélanges d'Archéologie Byzantine*, 158.

2. Կարեւոր խնդիրներ հայ եկեղ. պատմութեան. Վեներիկ, 1927, էջ 279-308.

Բագրատունեաց աղուանական թագաւորութիւնը, և ժԳ դարուն հետ վերջացաւ։ Արդ Պետրոսի անուամբ կեղծագրողը չէր կարող երևակայել զնդածայր «Թագաւորական դրօշ» մը, եթէ իրապէս չտեսնէր զայն Աղուանից քով, որոց հին արքայի մ'անուան ներքե փորձեց ծածկել Սիւնեաց համանման սովորութեան ապօրինի ծագումը։ Իսկ Աղուանից այդ ձևն արեւմուտքէն կու գար զոր օրինակի համար յաջողեցայ տեսնել Բ-Թ դարուց միջև՝ Գաղիոյ մեծին Կարոլոսի դրօշին ծայրը, և Ե Կարոլոսի համար գրուած գրչագրի մը մէջ, թէև երկրորդիս գունդն անխաչ է (Desjar. էջ 4, 15. տխ. 1), գուցէ արդիւնք սովորութեան փոփոխութեան կամ գծագրողի անուշադրութեան։

Եթէ Աբրոպայէն մինչև մեր դրացի Աղուանից հասած էր այս ձևը, ուրեմն ընդհանրացած բան մ'էր, և կարելի է՝ որ հայ Բագրատունիք իսկ ստացած լինին, և տուած իրենց աղուան ազգայնոց ալ։ Արդարև Հայոց արքունի նշանակներէն մին ևս էր գունդը, յիշատակուած Ս. Սահակայ Տեսլեան մէջ, որ դատելով իւր ընկած լեզուէն ու բովանդակութենէն, հնարուած է միջին դարուն, և հաւանօրէն Բագրատունեաց տէրութեան սկիզբներն

խակ¹, երբ մեր թագաւորք բիւզանդացի և արեւմտեան արքայից ոճով ոսկի գունդ մը կը կրէին ի ձեռին²: Սահակ կը տեսնէ հոն «գունդ մի ոսկի բոլոր», որոյ երեւումը կը մեկնուի այսպէս. «Եւ (զի) ոչ այն ոք էր որ ունէր ի ձեռին զգունդն, լո՛ւր զատուգապէսն և ի միտ ա՛ռ, զի լռելոց է մերձ ընդ մերձ թագաւորութիւն յազգէդ Արշակունեաց»³: Եւ խաչարարձ գունդը կամ խնձորն ի ձեռին և արքունի գաւազանին ծայր՝ կը գտնենք իրապէս Ռուբինեանց կնքոց ու դրամոց վրայ ևս (Ձև 4. Սխառան, 435 ևն). և կը նշանակէր երկրագունդը, որոյ վրայ կ'իշխէին թագաւորք (Auber, I, 58): Արդ եթէ Հայք ընդունեցան զայն արեւմուտքէն, բնական էր՝ որ ընդունէին իւր գործածութեան բոլոր սահմանով,

1. Ձի լեռնի թագաւորութենէն յառաջ Լամբրոնացին արդէն կը ճանաչէ զայն (Մեկ. Պատար. Վենետիկ, 1847, էջ 26), ինչպէս քան զինքն ալ կանուխ՝ Ժ. Բ. դարու կիսէն յառաջ՝ Թովմա Արծրունւոյ շարունակողներէն մին ևս (Ա. պուխ, 1852, էջ 353).

2. Բիւզանդացիք Հռովմայեցիներէն ժառանգեցին այդ սովորութիւնը, որ կ'երևի իրենց դրամոց վրայ Ե դարէն (Garrucci, Storia dell'Arte Crist. 2. տխ. 482. 3, 4, 11), և Հռովմայեցիներէն ալ կանուխ կը տեսնենք Ասորեստանեայց արքունի գաւազանին ծայրը (V. Place, Գ, տխ. 27, 45, 48), որոց հետեւեցան և Պարսիկք (Darem. Ա, 297, 674).

3. Սոփերք Հայկականք. Վենետիկ, Բ, 49, 59-60.

ուստի կանգնելով նաև դրօշին վերև։
 Կը կարծեմ թէ այս գնդաբարձ ձողին
 վրայ հաստատուած էր դրօշը՝ ժամանա-
 կին արևմտեան սովորութեամբ զոր յի-
 շեցինք, և տոհմային ոճով (աստ, 64),
 ոչ եթէ կախուած։ Արդէն նոյնպէս է
 վերև յիշատակուած օրինակն ալ Կիլի-
 կեցւոց օրերէն (ՁԼ 5)։ Եւ բոլորովին ան-
 ծանօթ է բիւզանդականին ձևն ու ձողէն
 կախելու կերպն անոնց ժամանակ, ինչ
 որ դրօշն ի նուէր ընդունելով միայն պիտի
 կարենար ընտանենալ անոնց, ինչպէս Բա-
 գրատունեաց պատահեցաւ, և այդպիսի նու-
 իրատուութեան վաւերական յիշատակու-
 թիւն չունինք։

Է. — ԻՇԽԱՆԱԿԱՆՔ։ — Մեր նախա-
 րարք ալ ունէին արքային պէս իրենց սեպ-
 հական դրօշները, շատ անգամ յիշատա-
 կուած պատմութեան մէջ։ Ազատանգե-
 դոս կ'աւանդէ երևելի իշխանաց ընկերելը
 Լուսաւորչին ի կեսարիա՝ «զօրօք, նշա-
 նակօք, իւրաքանչիւր գնդօք» (602)։ Մա-
 միկոնեան վասակայ հեծելազօրը կը նկա-
 րագրուի «դրօշաւորք կազմ նշանաւորք»
 (Փաւստ. Դ, Ի)։ Բագուանի ճակատամար-
 տին սկիզբը՝ Մուշեղ Մամիկոնեան «զիւր
 նշանն և զգէնն» օրհնել տուաւ Ս. Ներ-
 սիսի (նոյն, Ե, Գ)։ Մանուելի բանակին

մէջ ընդդէմ Մերուժանայ՝ կը տեսնենք նոյնպէս «նշանա արձակեալք, դրօշս փողփողեալս» (նոյն, Ե, ԽԳ)։ Աւարայրի ճակատամարտէն յառաջ՝ Պարսից բանակին հրամանատարը կը հարցափորձէր՝ թէ քանի՜ «պարագլուխք» կային հայ բանակին մէջ. և «դրօշից տնգամ իշրաքանչիւրոց տեղեկանայր» (Եղիշ. 180), որոցմէ իւր բանակին վրայ ևս կ'երևէին (Փարսկ. 211)։ Հայոց ճակատին մէջ հակառակ Մուսէի՝ «դրօշքն տարածանէին և նշանքն փողփողէին» (Թով. արծ. 121)։ Նոյնպէս ուրիշ շատ տեղեր և ամէն դարերուն կը ծածանին իշխանական վառերը։

Փաւստոս Հայաստանի մէջ կը հաշուէ ինն հարիւր նախարարութիւն (Դ, Բ), և Մեսրոբ՝ չորս հարիւր (Սոփերք, 2, 38)։ Արդեօք նոյնքան ալ դրօշներ կային։ Հաւանական չէ. այլ այն մեծ իշխանք միայն ունէին, որ կարող էին բանակին տալ յատուկ զօրագունդ և առաջնորդել անոր։ Այս պարագայն զգալի է եթէ Ագաթանգեղոսի վերոյիշեալ խօսքէն՝ ի կեսարիա երթին առթիւ, և եթէ մանաւանդ Փաւստոսի մէկ վկայութենէն՝ թէ Ս. Ներսիսի ընտրութեան համար գումարուեցան «մեծամեծք նահապետք ազգաց ազգաց, տոհմաց տոհմաց, գնդից և դրօշոց տեսրք» (Դ, Գ)։

Ուրեմն ամէն նախարար առանձին գնդի
 ու դրօշի տէր չէր, որով հարկ կը հա-
 մարի պատմիչս յատկապէս յիշատակել
 հոս այդ պարագայն: Տեսանք վերեւ՝ որ
 Մինրներսեհ կը տեղեկանար Հայոց բա-
 նակին պարագլխաց թուոյն և անոնց դրօ-
 շուց միայն, որոնք յայտարար էին զօ-
 րագլխաց թուոյն իսկ: Նախարարը բազ-
 մաթիւ էին հոն (Եղիշէ, 185), բայց
 համարօք կամ օգնական էին պարագլխ-
 աց (նոյն՝ 218), և յատուկ դրօշներ
 չունէին, որպէս զի Պարսիկն անոնց մա-
 սին ալ տեղեկութիւն ուզէր:

1. — Իշխանական դրօշուց ու նշա-
 նաց գոյները տարրեր լինելու էին, մա-
 նաւանդ Արշակունեաց օրով, արքունա-
 կան ծիրանիէն և ոսկիէն: Եւ ամբողջո-
 վին չի յարմարիր մերոց՝ Փլորոսի նկա-
 րագիրը պարթև իշխանաց դրօշուց, յամի
 53 ն. Ք. թէ «արքունի նախարարքն
 Սիլաքս և Սուրէն սկսան ցուցանել նշանս
 յոսկի և ի մետաքսեայ դրօշս փողփողեալս»
 (Sarre, 353): Մետաքսը կրնանք նկա-
 տել մերոց վրայ ևս, բայց ոչ ոսկին,
 գոնէ Արշակունեաց վերջին դարերուն,
 և դեռ այնուհետև ալ: Որով Սերէոսի
 ուշադրութիւնը կը գրաւէ այն պարագայն՝
 որ է դարուն թէոգորոս Ռշտունին Դա.

մասկոսի արար իշխանէն պարգև կ'ընդունի «հանդերձս ոսկեղէնս և ոսկեթելս, և վառ մի նորին օրինակաւն» (224), այս ինքն զգեստին պէս ոսկեհիւս, ինչ որ սովորական չէր իշխանաց, և բացառիկ շնորհք մը Ռշտունւոյն:

Իսկ ի՞նչ կրնային լինել մեր իշխանականաց սովորական գոյները: Հոս ալ կը պակասին մեզ դրական փաստեր: Տեսանք՝ որ Օրբելեանը խօսելով Վրաց ժԱ դարու սովորութեան մասին, անոնց թագաւորական դրօշը սպիտակ կը դնէ և նշանը կարմիր (աստ, 18): Ինչո՞վ կարելի է մեկնել անոնց այս զանազանութիւնը ժամանակի ընդհանուր արքունական սովորութենէն: Որովհետեւ վրաստան յաջորդական թագաւորութիւն մը չունեցաւ, այլ երկարատեւ ընդհատումներով, ինձ կը թուի՝ թէ սպիտակն անոնց իշխանական շրջանին գոյնն էր, որ թագաւորութեան վերահաստատութենէն վերջ ալ աւանդաբար մնաց անփոփոխ:

Նկատելով Վրաց դրացութիւնն ու քաղաքական սերտ կապերը հայ աշխարհի հետ, որ անոնց թագաւորներ ալ տուաւ Բագրատունեաց տոհմէն, հարկաւ անոնց աւանդութեամբք հանդերձ, կրնանք նոյնպէս ենթադրել մեր իշխանաց դրօշներու

գոյնն ալ: Արդէն յետ ծիրանւոյն՝ սպիտակը քրիստոնէութեան և առաւելապէս Հայաստանի մէջ ազնուականագոյն երանգն էր միշտ, սկսելով հեթանոսութենէն: Անահտայ նուիրուած զոհերն սպիտակ էին (Ագաթ. 34): Ամենէն հանդիսական օրերուն, ինչպէս մկրտութեան, զատիկի և արքունի յուղարկաւորութեանց, Հայք սպիտակ կը զգենուին: Նոյնպէս էր պատարագի քահանայական հագուստն ալ՝: Թագաւորը ու կաթողիկոսունք սպիտակ ջութիներ կը լծէին իրենց կառաց կամ կը հեծնէին², և այլն: Ուստի բնական հետեանք էր՝ որ մեր իշխանք իրենց վառերուն ընտրէին նոյն գոյնը, զանազանուելու համար արքունականէն, և նշանին համար՝ կարմիրը: Բայց այս կարգը միջին դարերուն՝ թագաւորական գահերու յափշտակութեանց ու ձկտումներու այն տապին մէջ՝ թուլացած էր. որով Օրբելեանք ԺԱ դարուն դեռ Վրաստանի մէջ, Վրաց արքունիքէն կ'ընդունին, կամ լաւ ևս՝ իրենց տոհմակից պատմիչն ընդունել կու տայ իրաւունք՝ «կարմիր ունել զվառ դրօշին, և սպիտակ նշան ի վերայ»

1. Հմմտ. գործս՝ Պտմ. հայ տրգ. 295, 303, 306, 342:

2. Ագաթ. 34, 602. Ստ. Օրբել. 53.

(277): Կարմիրն իսկապէս Վրաց չունեցած ու տուած նուէ՞րն. էր, թէ նախանձոտ նմանողութիւն մը Ռուբինեանց:

Այս դրօշուց ձեն անտարակոյս հետեւեցաւ ժամանակին սովորութեան, հին դարերուն լինելով չորեքկուսի երկար, և միջին դարերուն տոնաւոր (աստ, 24,40):

2. — Իսկ իշխանաց նշաննե՞րը: Այս մասին ամենէն բախտաւոր՝ Մամիկոնեանք են հներէն, հայ բանակին վերին հրամանատար և հայ սրտին ամենէն մերձաւոր տոհմը, որոց նշանին նկարագիրը կու տայ մեզ Փաւստոս՝ հետեւեալ բառերով. «աղանազգիք, աղանադրօշք, արծուհնչանք, վարժանականիչք» (Գ, Բ): Այս կոչումները պարզենք ու ճշդենք:

Հայկազեան բառգիրքն աղանադրօշքը կը փորձէ մեկնել՝ «յանուանէ արդեօք Ալանաց քաջաց կամ Աղուանից, կամ ի նմանութենէ աղաւնեաց»: Սակայն ընդունելի չէ «Ալանաց» մեկնութիւնը. զի Փաւստոս՝ որ երեք անգամ «յաշխարհէ ճենաց» կը դնէ Մամիկոնեանց ծագումը (Ե, Գ, ԼԵ), չէր կարող նաև յԱլանաց (աղանազգիք) համարել զանոնք: Պատմիչս և ոչ հիացող մ'է Ալանաց վրայ, զորս կոտորել կու տայ Մամիկոնեան վաչէի (Գ, Ե), ոչ ալ Աղուանից՝ զորս Պարսից դաշնակից կը

դնէ՝ Հայոց ու Մուշեղայ դէմ (Ե, Դ, ԺԳ). որով չէր կարող փառաւորել Մամիկոնեանքն անոնց թշնամեաց ցեղակցութեամբ ու դրօշով: Իսկ երկչոտ աղաւնին շատ անճան էր պատերազմի առաջնորդ մը լինելու և ճախրելու Արշակունեաց արծուոյն պատառիչ ճապոներուն քով:

Հետևաբար Փաւստոսի սխալագիր ընթերցուածը ճշդելու ենք Մեսրոբայ բառերով՝ որ հետևող մ'է անոր ու խմբագրիչ: Սա՝ Բիւզանդայ այդ տեղին կը կարդայ՝ «աղեղնաճիգք, արծուենշանք... աղեղնադրօշք» (Սոփերք, Զ, 17): Հոս աղեղնաճիգք գեղեցկապէս կ'ուղղէ նախորդին աղանազգիքը. աղեղնադրօշք՝ անոր աղանադրօշքը. և արծուենշանք՝ նոյն է երկուքին քով: Ուրեմն Մամիկոնեանց դրօշին նշաններն էին՝ Փաւստոսի շարադրութեան կարգով՝ նախ նետընկէց աղեղն, որոյ նմանը կար և ուրիշ ազգերու քով: Պարսիկ հին դրամներէ ոմանց վրայ՝ արքայից արքայն աղեղ կը քաշէ (Ազգր. Հնդ. 1912, թ. 1, էջ 220): Նոյնպէս կը ներկայանայ ասորական նշանաց մէջ Ասուր աստուածը, և Եգիպտոս իւր նշանաց կարգին ունէր նաև զոյգ մը նետեր՝ զետեղած խաչաձև (Darem. IV, 1308): Աւելին կայ. հռովմէական կայսեր Մարկոս Անտո-

նինոսի մէկ դրամին վրայ (35 Ն. Ք.) Հայաստան խորհրդանշուած է արշակունի թագով՝ որոյ հետ խառնուած են աղեղ մ'ու նետ մը (Պտմ. հայ տրգ. 66)։ Այդ ժամանակէն գուցէ արդէն հայ նշանաց մէջ էր աղեղը։

Կարևոր կը համարիմ այս տեղ պատասխանել համառօտիւ Պր. Գ. Քէպասպեանի ստեղծած մէկ երկդիմութեան, որ կ'ախորժի «աղեղնադրօշի» աղեղն արմատով ծիածանն իմանալ, և զայս տեսնել «Հայերուն» դրօշին վրայ Դ դարէն¹։ Դիտել կու տամ նախ՝ որ «աղեղնադրօշ» մակդիրը՝ միայն Մամիկոնեանց տրուած է պատմութեան մէջ, և ոչ Արշակունեաց կամ ընդհանուր Հայոց։ Երկրորդ՝ աղեղն իբր ծիածան՝ Ս. Գրոց և ուրիշ թարգմանութեանց մէջ նիւթական ու դիտումնաւոր կրկնութիւն է բնագրին, իսկ իւր հայ դասական միակ իմաստն է նետաձիգ գործին, քառին թէ պարզ ձևին և թէ ոսկեդարեան բարդութեանց մէջ, ինչպէս ա-

1. Ազատ հանդէս, 1918, էջ 264-6.

2. Յն. τόξον (Ծննդ. Թ. 13, 14, 16. Եզեկ. Ա, 28), որ նոյնպէս կը նշանակէ նետընկէց գործին, և հետևողութիւն է երբայական բնագրին, որ նմանութեամբ տուած է կոչումս ծիածանին՝ իբր Աստուծոյ նետընկէցը. «զաղեղն իմ եղից յամպս»։ ապա թէ ոչ՝ Յոյնք Երև կը կոչէին ծիրանի գօտին, ինչպէս մեք ուլ ծիածան՝

տղերսացոր, տղերսային, տղերսակապարձ և
 այլն: Երրորդ՝ նոյն ինքն Մեարոբ՝ որ
 կը հշդէ փաւատոսի տղերսադրօշք ընթեր-
 ցուածը, անոր մօտ կը գրէ և տղերսաճիգք,
 ինչպէս գրած էր փաւատոս ալ, որպէս զի
 դիւրաւ տեսնենք երկուքին մէջ արմատին
 խմաստի միութիւնը: Չորրորդ՝ գունագոյն
 ծիածանը, աւելի կանացի ակսորժակաց
 նիւթ, չէր կրնար հաշտուիլ ռազմագոռ
 Մամիկոնեանց հետ, որոց պարծանքն էր
 «սրաքօքն գրիւտն ջնջել», ինչպէս կ'ըսէր
 Մուշեղ (Փաւստ. Ե, ԼԵ), և առաջնորդել
 «տղերսացորք անվրեպք կորովիք» բանա-
 կաց (նոյն, Դ, Ի): Հինգերորդ՝ անկարելի
 և անդէպ է հայ զրօշուց վրայ որոնել
 զանազանութիւն գոյներու այն շրջանին՝
 երբ այս ոճն անծանօթ էր բոլոր աշխար-
 հի, ինչպէս դիտեցինք կանխաւ (աստ,
 11): Այն դարերուն Հայերն ամբողջ
 մարդկութեան հետ ծիածանը կը նկատէին
 «յամպս», զի դեռ չէր լիջած փաթութուած
 հայ Մասսի սպիտակ կատարին. և կը
 համարէին զայն «ի նշանակ յաւիտենա-
 կան ուխտին ընդ Աստուած և ընդ ամե-
 նայն երկիր» (Մենդ. Թ, 13). որով բնաւ
 չխորհեցան իրենց սեպհականել զայն որ
 և է ձևով, ոչ ալ թողին այս մասին որ և
 իցէ յիշատակ: Ուստի, կը կրկնեմ, մա-

միկոնեան դրօշին աղեղը՝ զէնքն խակ էր։
 Անոնց երկրորդ նշանն էր սրժիւն՝ ըստ
 կրկին պատմչաց, որով և անկարօտ ապա-
 ցուցանելու, այնքան խորհրդաւոր և յար-
 գի ամէն ազգաց ռազմիկներու համար,
 ինչպէս տեսանք (աստ, 26)։ Ասոր հոմա-
 նիշ է և աւելադրութեամբ գործածուած՝
 — որոյ համար և Մեսրոբէն դուրս թո-
 դուած է՝ — Փաւստոսի վարժնակսնիշքը,
 յորում Հայկազեանն իրաւունք ունի են-
 թադրելու վարուժան (ուսկից հարկաւ վա-
 րուժանակ = վարժնակ) արմատը, որ է ար-
 ծուի և այլ թռչնոց արուն¹։ Եւ արդարեւ
 Արծրունի տիկինն Սոփի՝ յանձին իւր Դե-
 րենիկ ամուսնոյն կ'ողբար «զոսկեփետուր
 ախոյանարձակ քաջազգի վարուժանն...
 զբարձրաթիռ սրժիւն» (Թովմ. 299)։ Կա-
 րելի է նաև Փաւստոսի հոմանշերն՝ «ար-
 ծուենշանք վարժնականիշք՝» իմանալ ի-
 րարու լրացուցիչ, իբրև սրու սրժիւ կրող։
 Ի հաստատութիւն մամիկոնեան արծուին
 կրկնենք նաև մեր վերև յիշածը՝ թէ
 Մանուէլ սպարապետը Պարսից արքայէն
 ստացաւ ի մէջ այլոց նաև «գարգմանակ
 ոսկի արծաթ», որոյ վրայ նստած էր
 սրժիւ մը (Փաւս. Ե, 1, Ը)։ Սաղաւարտին
 վրայ ևս տոհմային նշանը կրել՝ սովո-

1. Ինչպէս տատրակին առ Բարսղի, Վեցօր. 170.

բական էր ամենուն, ինչպէս տեսանք
(աստ, 30):

Արդ՝ մամիկոնեան դրօշուն նշանները
կրկին էին, արծիւ և աղեղն, ոչ զանա-
զան վառերու վրայ, — զի հնութեան
մէջ անսովոր է մէկ տոհմին երկու ան-
նման դրօշներ, ինչպէս դիտեցի կանխաւ,
— այլ միասին մէկ կտաւի վրայ. զոր
օրինակ՝ (այսպէս կ'ախորժիմ երևակայել,
որովհետեւ բարդ նշաններն իրարու խառ-
նուած էին միշտ՝) աղեղն արծուոյն մա-
զիլներուն մէջ, նշանակելով հայ զօրու-
թեանց սրաթուիչ ու քաջաղեղն հրամա-
նատարը: Ինչպէս շանթընկէց Արամազ-
դայ արծիւն ալ կայծակ մ'էր բռնած հին
դիցաբանութեան մէջ, և իւր պատկերը
կրող դրամոց վրայ (Darem. III, 703).
որպիսի էին նաև Դոմեաթիանոսի, Կոմո-
դոսի և այլոց անտիոքեան դրամները¹,
Պտղոմեանց բոլորը², Սելևկեանց, և նախ
քան զԱրշակունիս Հայաստանի իշխեցո-
ղաց ոմանց դրամները³:

3. — Սպարապետական նշանէն զատ՝

1. W. Wroth, *Catal. of the Greek Coins of Galatia* ևն. տխ. 22, 23 ևն.

2. R. S. Poole, *Catal. of Greek Coins*, տխ. 2-32.

3. E. Babelon, *Les Rois de Syrie, d'Arménie* ևն. տխ. 29.

ինձ կը թուի թէ Սիւնեաց պատմիչն ալ Օրբելեանց նշանին կ'ականարկէ, երբ յետ յիշելու անոնց դրօշին գոյները, կը յարէ իսկոյն իբրեւ անոնց իրաւունք. «և ի շըրջելն առաջի թագաւորին (Վրաց) և ի կանգնելն՝ ունել ի ձեռին գաւազան առիշտագրութիւն» (277): Այս գաւազանը սեպհական էր ոչ արքային, այլ արքունի պաշտօնէից ոմանց, ինչպէս սովորութիւն էր յարեմուտս ալ: Եւ ահա Օրբելեան իշխանին կրածն առիւծի գլուխ ունի, ինչ որ անոնց նշանն իսկ ենթադրել կու տայ. և զոր բնական էր թէ պահէին՝ զՍիւնիք իրենց հայրենիք ընելէն վերջ ևս: Հոս ալ ուշագրաւ է նմանութիւնը Ռուբինեան նշանին հետ, ինչպէս դրօշի գոյնին մէջ (աւատ, 57):

4. — Իշխանական վառերն իրենց լուսն ունէին նիզակ մը, և անոր վրայ հաստատուած պնդապէս. ինչպէս կ'երևի Մերութանայ օրինակէն, որոյ նշանակիրն «զնշանն զնիզակառն պատկեալ՝» յարձակեցաւ Արտաւազդայ վրայ (Փաւս, Ե, ԽԳ): Կը պատէ՝ որովհետեւ անբաժանելի էր նիզակէն, ըստ որում այդպէս պնդուած կը պահանջէր պատերազմի ժխորն ալ, որպէս զի դրօշը չբաժնուէր տիգէն: Մեարոբ երէց եթէ չէ կարող ապահովութեամբ

տանիւ զմեզ մինչև Դ դար, սակայն հին սովորութեան դեռ շարունակութիւնը կը ցուցնէ ժ դարուն, երբ կ'ըսէ՝ թէ Մուշեղ «զգաստառական սրբոյն Ներսիսի ի գեղարդն իւր կապէր», և իրեն դրօշ ըրած զայն՝ կը յարձակի թշնամւոյն դէմ (Սոփերք, 2, 73): Կապեր. ահա ուրեմն նիւզակին յարելու կերպն ալ. լարերով հաստատել:

Ծ. — Հին Հայաստան պահած է մեզ զանազան ուշագրաւ քանդակներ: Այսպէս Տաշրաց կամ այժմու Լոռի գաւառի Դսեղ գիւղին մէջ, ուր ժ. դարուն հաստատուեցան Մամիկոնեանք, զանգակատան որմին վրայ կայ երկգլխի արծիւ մը, որ ճապոններով գառնուկ մ'է բռնած: Նոյն ձևը կ'երևի յիշեալ գիւղէն ոչ հեռի՝ Բարձրաքաշ Ս. Գրիգոր Եկեղեցւոյն պատին վրայ ևս: Այս արծիւը Մամիկոնեանց այդ իշխանութեան մէջ՝ նոյն տոհմի նշանն իսկ համարեցաւ Պ. Ե. Լաւրյեան (Ազգր. Հանդ. 1901. 348, 423): Բայց վարկածս հեռի է իրականութենէ, ոչ միայն անոր համար՝ որ անոնց հին նշանին չի համապատասխաներ իւր մասանց մէջ, այլ որովհետև այդ նոր ձևը միջին դարուն շատ տարածեալ էր Հայաստանի մէջ՝ անկախաբար Մամիկոնեան զարմէն:

Այսպէս կայ այն Աղթամարայ քանդակաշատ Ս. Խաչ եկեղեցւոյն վրայ՝ ժդարէն¹. — Սիւնեաց Յախացքար գիւղի Ս. Կարապետ եկեղեցւոյն վրայ 1041էն (Լալայ. Լսնկր.), կառուցուած ոչ իշխանէ մը, այլ վարդիկ վանահօրէն՝ ըստ արձանագրին². — Նոյն գաւառի Մաղարդոյ ուխտին մէջ՝ տաճարի ճակատին, ձեռակերտ սիւնեցի Բաբգէն եպիսկոպոսին 976էն, ու վերաշինուած ժէ դարուն. բայց արծիւը միագլխի է (Սիսական, 518). — դարձեալ երկգլխին՝ Պռոշեանց հանգրատարանին մէջ՝ յԱյրիվանս Գառնոյ, ժԳ դարէն (Այրրտ. 339). — Նոյնը Սիւնեաց Ս. Սիոն անապատի զոյգ եկեղեցեաց միոյն վրայ, իւր քով ԶԼԱ (1282) թուականը. և աղօթավայրն անձանօթէ մը շինուած աւելի կանուխ, ունի քան զայդ հին արձանագրութիւն մը (Սիսական, 113). — Նոյն գաւառի Գոմոց գիւղի եկեղեցւոյն վրայ՝ 1263էն, շինուած Պռոշեանց օրով՝ երկու անտոհմիկ հարազատներէ (անդ, 174). և այլն: Այսքան վայրերու, դարերու, տարազարմ ու մերթսոսկական շինողաց յատուկ այս քան-

1. Walter Bachmann, *Kirchen und Moscheen in Armenian und Kurdistan*. Leipzig, 1913, տիւ. 35.

2. Հ. Ղ. Աւիշան, Սիսական, էջ 152.

դակն ուրիշ բան չէ, բայց եթէ եկեղեցեաց սեպհական զարդ մը, տարբեր Բագրատունեաց արժուենշանէն ևս (աստ, 36). և որոյ ծագումն իսկ արտաքին է, ոչ տոհմային: Առանց երկար ճառերու և թափառմանց, դիտել կու տամ՝ թէ այս ձեր շատ ծանօթ էր արևմտեայց ալ (Auber, IV, 464): Եւ ինձ շատ մօտ, վենետիկոյ Ս. Մարկոսի և Կարմեղեանց տաճարին, հնոյն Տուրրիսի (Torcello) և այլ վաղեմի եկեղեցեաց ոմանց վրայ ես իսկ կը տեսնեմ նոյն արծիւը, միագլխի, ճանկերով բռնած նապաստակ մը, օձեր և այլն, կանգնած մեր արծուին դիրքով, և մերթ կտուցը դրած որսին վրայ: Ինձ ախորժելի է՝ այս ձեր թարգման համարել աւետարանական բացատրութեան, «Ուր գէշն իցէ՝ անդր ժողովեսցին արծուիք», և ի խորհուրդ հասարակաց յարութեան՝ զոր կ'առակէ Փրկչին այս խօսքը, քան թէ Օրերի անապացոյց կարծեօք՝ արծուին վրայ նկատել սատանայն՝ որ կը յափշտակէ հոգիները (անդ): Այս իմաստով՝ քրիստոնէութիւնը չափազանց պատուած պիտի լինէր զսատանայն:

Հայաստանի մէջ կ'երևին ուրիշ պատկերաւոր քանդակներ ալ, որոց վրայ նոյնպէս դժուարին է որ և է տոհմային

նշան նկատել: Այսպէս Յախաղարի երկ-
 րորդ տաճարին՝ Ս. Յովհաննու որմին
 վրայ կայ քանդակ մ'առիւծի, յարձակած
 զուարակի մը վրայ գլխոյն կողմանէ (Լա-
 լայ. Լսնկր.), և եկեղեցին շինուեր է ոչ ազ-
 նուականէ, այլ 1041ին՝ յիշեալ Վարդիկ
 վանահօրէն (Սխական, 152-4). որով
 առիւծս պարզապէս զարդ է, նման անոր
 քանդակած արծուին՝ զոր տեսանք վերել:
 Մի և նոյն ձևը, հարկաւ նոյն նպատա-
 կով ալ, կայ դարձեալ Սիւնեաց թանա-
 հատի ուխտին եկեղեցւոյ զմբեթին վրայ
 (Լալայ. Լսնկր.), կառուցուած ԺԳ դա-
 րուն Պոռշեանց ձեռօք (Սխական, 120),
 որոց տիրապետութիւնն այդ կողմերը կը
 սկսի նոյն դարու կիսուն, և իրենք կը
 սերէին խաչենոյ տնէն (անդ, 92): Ընդ
 հակառակն նոյն Պոռշեանց դամբարանն
 յԱյրիվանս՝ վերոյիշեալ զառնարարձ ար-
 ծուին վրայ ունի նաև երկու առիւծներ
 դէմ առ դէմ, և անոնց մէջտեղ նոխազի
 գլուխ մը, որոյ բերանէն կը մեկնի գա-
 լարուն պարան մը և կը կապուի գազա-
 նաց վզերուն: Հ. Աւիշան կը փորձուի
 սոյն քանդակիս մասին ըսելու՝ թէ «նո-
 րին Պոռշի նշան թուի» (Այրտ. 341,
 343): Սակայն մի և նոյն տոհմէն քան-
 դակուած երկու ձևերուս աննմանութիւնը,

և երկրորդին խառնուրդը գարդի արծուին հետ, չեն ներեր ոչ միոյն վրայ անոնց նշանը տեսնել: — Արծրունի Մլքէ Թագուհւոյն Աւետարանին մէջ, 902 Թուականին, որ կը պահուի ի Ս. Ղազար, խորանագարդերէն միոյն գլուխ կան երկու առիւծներ դէմ առ դէմ, առաջինը Թաթերը դրած միջանկեալ ծաղկամանի մը վրայ¹, զոր Հ. Ալիշան կարծեց Արծրունեաց «արքունի նշանը»². բայց որ չի համոզեր զիս, երբ մանաւանդ կը նկատենք նոյն գրչագրի միւս խորանագարդից գլուխ ուրիշ ծովային անասուններ ևս: — Թանահատի տաճարին կից մատրան վրայ քանդակուած է նաև ձիաւոր մը, որ առիւծի հետ կը կռուի, և անոր վերև սիրամարգ մը, երկու հաւ և այծեամ մը (Սիսական, 120): Որսական տեսարան մ'է պարզապէս: — Սիւնեաց Հերհեր գիւղի շիրմի մը վրայ, Թուականն ու տէրն անյայտ, կայ նոյն առիւծը յարձակած եզան կամ ցլի վրայ, առաջինը նայողին աջ կողմէն, և միւսը՝ ձախէն, հակառակ նախորդ ձևերուն. իսկ երկու կողմանէ կանգնած են մէկ մէկ մարդ (Լալայ. Լսնկր.): Դարձեալ զարդի պատ-

1. Զարդանկարք Աւետ. Մլքէ թագ. Վենետիկ, 1902.

2. Հայաստանում, Վենետիկ, 1901, էջ 280.

կեր մը: — Շիրակայ Տայլար գիւղի Է-
կեղեցւոյն վրայ, շինուած՝ ինչպէս կը
թուի՝ ԺԳ դարու սկիզբն ու անժամօթէ
(Շիրակ, 17), քանդակուած են երկու
առիւծ, որ կը յարձակին երկուստեք զոյգ
մ'այծեմանց վրայ (Հ. Փրբ. Նահապ.
Լսնկր.): Միշտ զարդ:

Այս քանդակզարդերէն ոչ միոյն վրայ,
կը կրկնեմ, կարելի չէ մեզ ազնուակա-
նութեան մը խորհրդանշանը նշմարել: Մեր
խշխանական տոհմերը միջին դարուն յոգ-
նած ու մերձ ի վախճան, չունին ժամա-
նակի արեւմտեան դեռածին ազատաց նո-
րասէր եռանդը՝ ցուցադրելու շինուածոց
վրայ իրենց սեպհական նշանները, որոց
գործածութեան հին պայմաններն ալ (աստ,
55) արդէն կը պակսէին մերայնոց: Եւ
ես յիշեցի և լուծեցի հայ հնութեանց վրայ
դրոշմուած ինձ ծանօթ ձևերը, որպէս զի
ուրիշներ ալ չհրապուրուին՝ այդպիսեաց
իրականէն տարրեր իմաստներ ընծայելու:
Որով կրնանք պնդել՝ թէ մեր նախարա-
րութեանց մէջ բաց ի Մամիկոնեանց և
քիչ մ'ալ Օրբելեանց, այլոց դրօշներու
մասին հաւաստի ծանօթութիւնք ու նըշ-
մարանք կը պակասին մեզ տակաւին: Ի-
ցիւ թէ ժամանակն ու ապագայ պե-
ղումներ բանային զանոնք ծածկող քողը:

Ը. — ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴՐՕՇԸ: — Տոհմային վառերէն զատ՝ Հայաստան ունէր հասարակաց գործածական դրօշ մ'ալ. և էր քրիստոնէութեան նշանը, նմանողութեամբ միւս հաւատացեալ ազգաց՝ որոց մասին խօսեցայ աշխատութեանս սկիզբը: Մեծն Կոստանդիանոս քրիստոնէացուց յառարուսը (*labarum*), որ ոսկեզօծ ձողի վրայ կը կրէր ծիրանի կտաւը, ոսկի ծուպով և խաչին ոսկեհիւս մեկնազրով. և զոր յաջորդ բիւզանդական կայսերք ալ պահեցին, ինչպէս ըսի՝ (աստ, 20): Բաց աստի՝ ասոնք առին իրր նշան բուն խաչն ալ, թանկագին մետաղէ յօրինուած ու զետեղուած բարձր ձողի մը ծայրը, որ կայսերաց առջևէն կը տարուէր:

1. — Նոյն խաչն ի հնուց Հայոց բանակն ալ ունէր պատերազմաց մէջ, բայց վառի վրայ ձևացուցած: Վարդանանք երբ կը դիմէին ազատելու հայրենի ամրոցները Պարսից ձեռքէն, «խաչանշան արարեալ ի վերայ զօրուն», որ է խաչին նշանը կամ վառը կանգնած բանակին վերեւ, այնպէս կը յարձակէին, կ'ըսէ Եղիշէ (127): Ի հաստատութիւն իմ այս մեկնութեան՝

1. Մենագրական նշանը միաց անոնց դրօշին վրայ մինչև ցԺԲ դար, և ապա տեղի տուաւ նոր ձևերու (*Jacquemin, Hist. générale du Costume, էջ 17-18*):

պատմիչս կը զգացնէ՝ թէ վարդանանք
սոյն վառն իրենց հետ ունէին նաև Աղուա-
նից օգնութեան գնալու ժամանակ, երբ
անոնց աղօթել կու տայ այսպէս. «Յրուեա
և վատնեա զչար միաբանութիւն թշնա-
մեաց քոց առաջի քոյոյ փրկական մեծի
նշանիս» (անդ, 140): Այս դրօշն ուրեմն
անպակաս էր ռազմի մէջ, և առաւելապէս
անհաւատից դէմ: Այս մասին հետաքրք-
րական է Դաւիթ Անյաղթի վկայութիւնն
ալ, որ ի ցոյց կը դնէ խաչին՝ այս ինքն
խաչադրօշին մեծ կարևորութիւնը պա-
տերազմի մէջ, կոչելով զայն «թագաւո-
րաց յաղթանակ, իշխանաց յոյս քաջու-
թեան, քրիստոսսուէր զօրաց յառաջուպա-
նետ, (որով կ'իմանանք՝ թէ բանակին
առջևէն կը տանէին), ախոյանաց քաջա-
ւերութիւն, նահատակաց զօրավիգն, վը-
տանգելոց օգնական, պարտեցելոց ապա-
ւէն¹»: Ի դարուն՝ Մամիկոնեան Գայլ
վահանայ համանուն թոռին հետ պատե-
րազմի կ'երթան 385 կրօնաւորներ, որոց-
մէ ամէն զոյգ բռնած էր մէկ մէկ «խա-
չադրօշ քարճրուքուն», կ'ըսէ պատմիչը. և
ընդհարման պահուն «զնշան խաչին դար-
ձուցանէին ի վերայ թշնամեացն²»: Յիշենք

1. Դաւիթ Անյաղթ, Վենետիկ, 1833, էջ 117.

2. Յովհաննէս Մամիկոնեան, Վենետիկ, 1832, էջ 50.

վերջապէս՝ թէ Ժ դարուն թուվմա Արծրունի խօսելով Բագրատունի Սմբատ արքայի մասին, կ'ըսէ՝ թէ սովորութիւն էր «տալ (այս ինքն տանել) առաջի նորա նշանակրս խաչադրօշ» (268): Եւ ուսկից կըրնանք իմանալ՝ թէ նոյն վառր Բագրատունի արքայից առջևէն ալ կը տարուէր պատերազմէ դուրս՝ հանդիսական օրերուն, և զոր անկասկած հին ժամանակ մեր նախնիք ալ կը գործածէին նոյնպէս ուրիշ առթից մէջ ևս:

Յիշեալ վկայութեանց մէջ տեսանք խաչին ներկայութիւնը դրօշին վրայ, որոյ ձևին ալ ուշ դարձնելու ենք: Մենագրական ըսի կոստանդեան դրօշին խաչաձևը. և էր «Քրիստոս» անուան առաջին երկու յոյն գրերը՝ Χ և Ρ, խառնուած իրարու. այս ինքն վերջինը նստած առաջնոյն վերին խոռոչին մէջ, և իւր բունն անոր կեդրոնէն կը կտրէր կ'անցնէր վար (Darem. VI, 1321): Նոյնն ունէր երկրորդ ձև մ'ալ. Χ կանգնած խաչի ոճով, և վերին ծայրը Ρ տառին գլխով աւարտած¹: Նախ քան զկոստանդիանոս՝ երբ դեռ քրիստոնէութիւնն արհամարհուած ու

1. Martigny, *Diction. des Antiquités chrét.* Paris, 1889, էջ 476-82. — Cabrol, *Diction. d'Archéol. Chrét.* 4^{տ.} Ա, 1-23.

հալածուած էր իւր նշանով հանդերձ, Ե-
կեղեցին խոհեմութիւն համարեցաւ խաչին
խակական ձեւը ծածկել յիշեալ մենագրին
յարմարական ձևին ներքեւ, որ կար արդէն
հեթանոսական շրջանէն՝ տարբեր նշանա-
կութեամբ¹, և զոր քրիստոնէութիւնը վե-
րածեց, միանգամայն կրկին իմաստ ըն-
ծայելով անոր, Քրիստոսի և խաչի: Կոս-
տանդիանոս երբ ուզեց խաչն ամբառ-
նալ իւր դրօշին վրայ, այդ մենագիրն
իսկ գտաւ իբր աւելի գործածական, և
զայն՝ վերոյիշեալ ձևերու առաջնով օրի-
նակեց իւր վառին վրայ, զոր կանգնեց
յաղթական ընդդէմ դիցապաշտութեան:
Այս հանդիսական գործով աւելի ևս նուիր-
ականացաւ մենագիրն ամբողջ քրիստո-
նեայ աշխարհի մէջ:

Անոր կը հանդիպինք քանի մ'անգամ
նաև Հայաստանի մէջ՝ մեր քրիստոնէու-
թեան նախկին դարերուն, բայց միշտ
զոյգ ձևերէն երկրորդով՝ որոյ վրայ աւելի
զգալի էր տէրունական նշանը: Չոր օրի-
նակ Վաղարշապատու՝ կաթողիկէին պա-
տին վրայ կայ այն՝ խառն Չուիթ, Տի-
րէր ու Գարեգին հայ անուններով և յու-
նարէն գրչութեամբ, զոր Սաչիգովսկի կը
համարի Ե կամ Չ դարու գործ²: Դար-

1. Vigouroux, Diction. de la Bible, հտ. Բ, 1129.

2. Էյմիսթևի Առետարանը. Վիեննա, 1892, էջ 7.

ձեալ մենագրական խաչը, յունարէն գրութեամբ «Ներսէսի կաթողիկոսի», զոր նոյն հեղինակը Շինողը կը կարծէ, քանդակուած է Վաղարշապատու մօտ գտուած չորս խոյակաց վրայ, զորս Զուարթնոց եկեղեցւոյն մասն կը համարի (էջ 9)։ Աւելին կայ. յոյն մենագիրս այնքան ընտանի և հաճելի էր Հայոց, որ Ս. Մեսրոբ զայն կնիք դրաւ նորագիւտ հայ այրուքենին, որոյ մէկ մասն յունականէն էր։ Մեր Քտառն է այն, որ հին արձանագրութեանց ու երկաթագիր գրչագրաց մէջ ունի երկար բուն մը, և խոտորնակ գիծը գլխէն հեռի է և հաւասար թւերով՝ ինչպէս խաչը։ Քէին ձևը, աւելի նման յոյն բնագրին, մնաց այրուքենին յատուկ, մինչդեռ արուեստի մէջ նոյն մենագիրը զարգացաւ և այնպէս իշխեց։ Արդարեւ Վաղարշապատու որմին ձևը, զոր աշխատութեանս հետ հրատարակուած դրօշին վրայ յառաջ բերած եմ (ՁԿ 8), հայ արուեստաւորին մէկ քմահաճոյքը չէ։ Զայս կը տեսնենք յար և նման ու շատ տարածուած Ե-Զ դարուց ասորական եկեղեցեաց ու տանց վրայ ևս, որոց ձևերը հրատարակած է Վոգուէ¹, ինչպէս նաև Եգիպտոսի մէջ²։ Կը հետևի՝

1. De Vogüé, *Syrie Centrale*, Paris, 1865, տիւ. 20, 33, 43, 46, 62, 127, 128.

2. Cabrol, *Dict.* IV, 2516.

որ նոյնը մեր քով ալ ընտանի էր և սովորական: Ու մեր և ասորական քանդակաց մէջ ընդհանրապէս շրջանակուած է:

Ուսկից էր Հայոց փարումն այս մենագրին: Բնականապէս նախագրիգորեան հայ քրիստոնէութեան մ'արդիւնքը չէր կրնար լինել այն: Որով մեր միտքը ստիպեալ կը թռչի դէպ ի կոստանդեան մենագրական դրօշը, որ Հայոց ալ թելադրեց խաչանիշ վառին գաղափարը զոր տեսանք և գաղափարին հետ՝ — հիմայ կրնանք համարձակօրէն ըսել՝ — նաև կոստանդեան նշանը: Եւ երբ Դաւիթ Անյաղթ՝ յետ մեր Արշակունեաց անկման՝ տակաւին «թագաւորաց յաղթանակ» կը կոչէր խաչադրօշը, հարկաւ կ'իմանար Բիւզանդիոնի կայսերքը, և կ'ակնարկէր անոնց դրօշի մենագրական խաչին, զոր միանգամայն՝ կ'անուանէ «իշխանաց յոյս քաջութեան»: մանաւանդ հայ ազատանւոյն՝ որ կը շարունակէր կռուիլ մի և նոյն դրօշին ներքեւ, ինչպէս տեսանք: Եւ ասոր նշանն էր զարգացեալ մենագիրը, — տարբեր կոստանդեան դրօշի մենագրին պարզ ձևէն, — մեր յառաջ բերածն իսկ, որ լաւագոյն ներկայացուցիչն էր խաչին, մինչև որ վերջնոյս հասարակ ձևին առջև տեղի տուաւ մենագիրը Զ կամ Է դարէն վերջ:

2. — Ի՞նչ էր խաչադրօշին գոյեր։
Յատկապէս յիշուած չէ, բայց և ոչ դժուարին գուշակել։ Եթէ Հայք անոր զաղափարն ու նշանն ինքնին Բիւզանդիոնէն առին, հարկաւ զանց չըրին անոր յարակից պատշաճութիւնքն ալ, որոց զխաւորն էր ծիրանին, գոյներու ազնուագոյնը և սեպհականը թագաւորաց, որ լաւագոյնս կը յարմարի երկնից Արքայի նշանին։ Մանաւանդ որ՝ ինչպէս տեսանք՝ արտաքոյ մարտից արքունի դրօշ ալ էր այն մեր քով. ուստի առաւելագոյն իրաւամբ արքունական գունով պճնելի. իսկ նշանն ոսկշով, ինչպէս էր ծոպն ալ նախկին դարերուն։ Բայց հարկաւ այս նկարագիրն ամէն ժամանակ կամ ամէն վառերու վրայ կարող չէր անփոփոխ մնալ, ինչպէս կ'անցնինք տեսնել օրինակներով։

3. — Բարեբաստիկ դիպուածով մեր առջև դրած է խաչադրօշ մը Ս. Ղազարումէկ գրչագիր աւետարանը, ելած նշանաւոր Պիժակ Սարգսի վրձնէն 1331ին. այս ինքն Ռուբինեան հարստութեան անկմանէն կանուխ ու կիլիկիոյ Դրազարկ վանքին մէջ։ Այլ ևս հին դրօշին ճշգրիտ պատկերը չէ այն. և դժբախտաբար չափազանց փոքրիկ ալ է, որով և անկատար. և զոր նմանահանութեամբ յառաջ կը բերէ Հ. Ալիշան

իւր Սիսուանի մէջ (235), բնագրին տար-
տամութիւնքն աւելի շեշտելով, մինչ ես
կու տամ անոր աւելի մեծը (Ձև 5):
Յայտնի է հոն տակաւին ծիրանեգոյն վառը,
սակայն բաժանուած կրկին մասանց. ներ-
քինը՝ չորեքկուսի հաւասարակողմ, հին ձևն



Ձև 5. — Դրօշ Պիժակ Սարգսի:

իսկ, որոյ վրայ կ'երևի հաւասարաթե-
կամ յռնական խաչը, ոսկեծիր կամ ոսկե-
դէն, յաջորդը նախկին մենագրին, և գրա-
ւած է կտաւին մեծագոյն մասը: Իսկ իւր
չորս թևոց միջոցներուն մէջ կան մի մի
ոսկեգիր անորոշ զարդեր, զորս կը կար-
ծեմ փրկչական հայ մենագրերը, ՏԲ, ԱԾ,
ՅՍ, ՔՍ, պատուով, ծանօթք այն շրջա-
նին պատարագի նշխարին խաչապատկե-
րին մէջ ալ՝ նկարագրուած Գրիգոր Տա-

Թեազիէն¹, և 1323ի հայ տապանագրի մը վրայ ի Պիշպէք², ապացոյց՝ թէ լոկ եկեղեցւոյ յատուկ չէր. և որ միանգամայն է դրօշին իսկապէս հայացուցիչ, թէև ուրիշ ապացոյց չունենանք հաստատուն պայման մը նկատելու զայս նաև աւելի երիցագոյն դարերուն: Իսկ կտաւին արտաքին կամ յաւելուածական մասն՝ առաջնէն երկար, ըստ սովորութեան միջին դարու՝ սրանկեամբ ճեղքուած է երկու լիզուաց կամ տտներու՝ որ կը ծածանին հովէն: Այս վառը նիզակի մը ծայրը կը գտնուի, և պրկուած է բնին. պարագայք՝ որ անոր քաղաքական դրօշի նկարագիրը կ'ընծայեն (հմտ. Ձև 9): Եւ կը գտնուի աշտարակաձև շինուածի մը վրայ, որ կը բարձրանայ Յովհ. Աւետարանչի կենդանագրին քով: Կը կրկնեմ՝ թէ նկարս իւր փոքրկութեան մէջ ոչ նկարչին ունեցած իրական բնագրին կատարեալ թարգմանը նկատելի է, ոչ ալ մեզ անթերի և ապահով առաջնորդ մը. բայց գոհացուցիչ է գէթ գլխաւոր մասանց մէջ, և այն՝ նկատմամբ միջնադարեան ձևին:

Կայ ուրիշ դրօշ մ'ալ Ս. Ղազարու


1. Քարոզգիրք, հտ. ամարան, 158:

2. Հ. Յ. Տաշեան. Ակնարկ մը հայ հնագրոշքեան վրայ, Վիեննա, 1898, էջ 152:

1356ի ճաշոցին մէջ, — գրուած ի Սուր-
դաթ Խրիմու — ս. Յովսեփայ յայտնու-
ած հրեշտակին ձեռքը: Պատաստին եր-
կայնութիւնն աւելի է քան զլայնութիւնը,
և աւարտած երեք երկայն տտներով: Գոյ-
նը սպիտակ է, և երեսին կարմիր խաչ
մը, որոյ թևերը կը հասնին պատաստին
եզրերը, և ստորինը կ'իջնէ վար մինչև
տուտին ծայրը: Այս դրօշն ալ հաստա-
տուած է նիզակաբնին վրայ (Ձև 6):
Նոյն գրչագրին մէջ կայ երկրորդ դրօշ
մը՝ իւղաբեր կանանց աւետող հրեշտակին
ձեռքը: Բոլոր հանգամանքները նոյն են
նախորդին հետ. միայն պատաստն երկայ-
նաձև է, առանց տտներու և դեղնով
եզերուած (Ձև 7). ապացոյց այն զանազա-
նութեանց՝ որ կային դրօշներու վրայ:
Գրչագրին տեղն օտար, բայց ծաղկողին
(կիրակոս քհ.) հայ հոգին, Մխիթար
կաթողիկոսին ու Կոստանդին թագաւորին
յիշատակութիւնը, և դրօշին խաչանշանը,
հեռի Խրիմու տիրող թաթարականէն, կը
պահանջեն՝ որ այդ դրօշներու վրայ հայ-
կական ձևեր տեսնենք:

4. — Քրիստոնէական դրօշիս խաչը
միջին դարուն յունականն էր ըսի. և որ
մեր քով կ'երևի սահմանափակ կամ շրջ-
ջանակաւոր ձևերու մէջ միայն: Մեր

միջնադարեան հնութեանց վրայ աւելի
յաճախ երևցողն է շատինական կոչուածը,
որոյ ստորին թևն երկարագոյն է քան



Ձև 6 և 7. Դրօշմեր նիրակոսի

միւս երեքը՝, ինչպէս ներկայ երկու դրօշից վրայ։ Սակայն ունէինք զրեթէ սեպհանակ ձև մ'ալ, վերին ու ստորին թևերն իրարու հաւասար, և քան զխոտորնակ-

1. Յռնական կամ շատինական՝ ոչ ծիսի, այլ ձևերու սահմանն է միայն, անխափր զործածուած երկուքն ալ արևելք և արևմուտք։

ներն երկար: Գրեթէ սեպհական՝ կ'ըսեմ,
 ըստ որում աւելի յաճախեալ էր մեր քով
 քան այլոց, և յաճախութիւնը հարկաւ
 արդիւնքն է դիտաւորութեան մը: Տարի-
 ներ յառաջ հունգարահայ բարեկամս Յու-
 լիոս Միրզայեան այս ձևը նշմարելով
 Մխիթարեանց տպագիր նշանի մը վրայ,
 հարցուց ինձ պատճառն և առիթ տուաւ
 զայն խուզարկելու հայ հնութեանց մէջ:
 Բախտաւոր եղայ գտնելու որոնածս՝ թէ
 երիցագոյն և թէ միջին դարերուն. զոր
 օրինակ՝ կ'երևի այն Տեկորոյ նորակոր-
 ծան տաճարին վրայ, հիմնարկութիւն Ե
 դարու¹, թէև չկարենանք ձևն ալ ժամա-
 նակակից համարիլ հաստատապէս: Կայ
 Տաթևոյ եկեղեցւոյն ճակատին՝ Թ դարէն
 (Սխական, 225), ի Ս. Ղազար պահուած
 1248ի Ձեռնադրութեան տետրակին լու-
 սանցից մէջ՝ երկու անգամ. Խոտակերաց
 Ս. Նշանին վրայ՝ պահուած յէջմիածին,
 1300 թուէն², և այլ զանազան տեղեր:
 Եւ որ աւելի ուշագրաւն է, նոյն ձևով
 է վաղարշապատու Ս. Հռիփսիմէի և Անւոյ
 Ս. Առաքելոց ներքին յատակածէն ալ,

1. Թօրամանեան, Հայ ճարտարապետութիւն. Տփղիս, 1911, էջ 21.

2. Փեղարոշեատ, Տփղիս, 1911:

մին է և միւսը ժՈՒ դարէն¹։ Եթէ միւս խաչերուն քով փափաքելի էր հայկական խաչ մ'ալ ունենալ, մեզ չի պակսիր այդ։ Ունինք հիմը, որոյ վրայ կը մնայ բարձրացնել շէնքը։

5. — Խաչադրօշիս բունն ալ նման էր միւս քաղաքական դրօշուց ունեցածին. այս ինքն նիզակ մը, որ մեր քով ընդհանուրն ու միակն էր երկար դարերու շրջանին մէջ (աստ՝ 32, 64)։ Արդէն յայտնապէս տեսանք տակաւին միջին դարերուն մէջ անգամ, վարագայ նշանին (ստորև) և պիծակեան ու կիրակոսեան դրօշից կապումը գեղարդի մը վրայ (աստ՝ 78, 81), որպէս զի դիւրաւ համոզուինք՝ թէ նոյնը սեպհական էր ու մնաց միշտ խաչադրօշին ևս։

6. — Բաց ի վառէն՝ կը տարուէր բուն խաչն ալ դրօշի պաշտօնով, ինչպէս կը տեղեկացնէ Յովհաննէս պատմիչ, յիշելով Բ Աշոտոյ խաչը՝ «զոր սովորն էր միշտ առաջի իւր շրջեցուցանել» (4)։ Եւ միակ օրինակը չէ այս. Փրանկը, Գող վասիլ և Ապլղարիպ իշխանք Հայոց՝ Ուռհայ քաղաքին ծգնութեան երթալով Թուրքաց դէմ, «հանեալ բարձրացուցին

1. Թօրամանեան, Էջմիածնի Տաճարը. Տփղիս, 1910, էջ 16, 13.

զվարագայ սուրբ նշանն ի վերայ գեղարդան, և տանէին առաջի զօրացն» (Ուռհ. ՄԴ): Նոյնպէս Դ Լևոնի զօրքը 1302ին կռուի մը մէջ կը յարձակէր Արաբաց դէմ, «զնշան սրբոյ խաչին առաջի տանելով» (ի Սմբատ, ԶԾԱ):

Թ. — ՆՇԱՆԱԿԻՐ: — Այսպէս կը կոչուէր ոսկեղարուն (Փաւս. Ե, ԽԳ. Սեբեւրիանոս, Զ), և յետոյ նաև Դրօշակիր (Ոսկեբ. ի Հյկզ. Բառ.), այն պաշտօնեայն՝ որ դրօշը կը տանէր: Եւ էր այս շատ կարևոր ու պատուաւոր գործ մը: Արքունեաց պաշտօնեայք՝ մանաւանդ Արշակունեաց օրով՝ սովորաբար նախարարներ էին, որոնք որդի ի հօրէ կը պահէին մի և նոյն իրաւունքը: Ըստ այսմ Արշակունեաց նշանակիրք՝ Վաղարշակայ օրէրէն և անոր կարգադրութեամբ իսկ՝ Արծրունիք էին ըստ Խորենացւոյն, որ անոնց այս անունը յարմարաբար կը մեկնէ՝ «արծիռոշնիս, որք արծուիս առաջի նորակրէին» (Բ, Է): Մեարոք երէց նախարարական տոհմերու կարգին կը թուէ՝ Արծրունեաց հետ՝ նաև Դրօշակիրք (Սոփևրք, Զ, 37). որ եթէ իսկապէս պատմական է, պիտի հետևեցնենք՝ որ Արծրունիք կը կրէին արծուի արձանները, և Դրօշակիրք՝ բուն վառերը:

Արշակունի հարստութեան անկումը, կամ մանաւանդ արարական տիրապետութիւնը՝ ջնջեց Հայաստանի հին կարգերը, մինչև որ ի գահ ելան Բագրատունիք։ Ասոցմէ Սմբատ զԳուրգէն Արծրունի մեծարեց՝ կարգելով «ի պատիւ զօրավարութեան Հայոց մեծաց», այս ինքն սպարապետութեան, որ երբեմն Մամիկոնեանց յատուկ էր, և անոր տուաւ իւր տոհմին հին իրաւունքը, «ըստ օրինի թագաւորացն Յունաց տալ (իմա կամ կարգա տանել) առաջի նորա նշանակս խաչադրօշս» (Թովմ. 268)։ Կը հետեւի՝ որ այդ դարուն բիւզանդական սովորութեամբ, որ Հայոց ալ անցած էր, արքունի նշանակրութիւնը սպարապետին յատուկ էր. կ'իմացուի՝ հանդիսական առթից մէջ։

Եթէ թագաւորին դրօշը նախարար մը կը բառնար, նախարարացն ալ զինուորական մը կը տանէր՝ ոչ թէ իշխանը։ Յիշուեցաւ կանխաւ «նշանակիրն Մերութանայ» Արծրունեաց իշխանին, որ անոր կ'ընկերէ մարտին մէջ. և իրեն ախոյեան տեսնելով զԱրտաւազդ պատանին, իւր բռնած վառը կը պատէ նիզակին, վառին բունը կոռուոյ զէնք կ'ընէ, կը յարձակի անոր դէմ, և կ'ընկնի անոր նետին հարուածով (Փաւս. Ե, ԽԳ)։ Սմբատայ օրինակին

մէջ տեսանք՝ որ նոյն իսկ «առաջի նորա»
կը տարուէր դրօշը Այս՝ հանդարտ վիճակի
մէջ. ուր պատերազմին խառնակութիւնը
չպիտի ներէր՝ իշխանին առջև բռնել միշտ
վառը. բայց արքային մարտի խառնրդէն
հեռի մնալովը՝ կարելի էր, ինչպէս կը
գրէր մեծն Լևոն՝ «առաջի մեր» տանել
տալ զայն նաև այդ առթիւ (աստ՝ 49):

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ Ն

Հայոց հին գրականութիւնը մեր նիւ-
թին նկատմամբ աղքատ է. հայկական
հնութիւնք սակաւախօս: Հայաստանի նշա-
նակերպ հին քանդակները սովորաբար
զարդեր են միայն, հայ ազատանւոյն
դրօշները մեծագոյն մասամբ անծանօթ,
և արդի բանասիրաց տեսութիւնք ոչ հա-
մոզիչ: Սակայն և այնպէս հայ անցեալը
թողած է նշխարներ ու յիշատակներ, որոց
մտադիր քննութիւնը հետեւեալ բաւական
գոհացուցիչ արդիւնքը կու տայ մեզ:

1. — Այս պատերազմական սպասը՝
հայ լեզուի մէջ կոչուած է Դրօշ, վառ,

Նշան կամ Նշանակ, թէև վերջինքս սեղմ իմաստով անոր պատկերը նշանակէին: Իսկ ստորին դարերուն ընդունուեր է արարերէն Աշամբ կամ Սանձախը:

2. — Արշակունեաց դրօշն էր ծիրանեղոյն, չորեքկուսի՝ կարճ և ոսկեծոպ, կամ երկար և անծոպ: — Նշանը՝ արծիւ, հաւանօրէն թուով երկուշ և մէջտեղ արև, ու միշտ ոսկեհիւս: — Բունը՝ նիզակ մը, որոյ վրայէն կախուած էր վառը, և կամ հորիզոնաձև կապուած՝ ըստ կրկին ձևոց դրօշին:

Չատ էին ձողաբարձ արձանակերպ ոսկի արծիւները՝ որ արքային առջևէն կը տարուէին:

3. — Բագրատունեաց դրօշը նոյնպէս ծիրանի էր, ի սկզբան երկայնաձև, յետոյ չորեքկուսի և ոսկեծոպ՝ նման բիւզանդականին: — Նշանը՝ հին արծիւն էր յատուկ ձևով, և ոսկեհիւս: — Բունը՝ շատ հաւանօրէն կը կրէր խաչաքարձ ոսկի ցռեղը: և վառը նախ հաստատուած բունին վրայ, յետոյ կախուեցաւ դէպ ի վար:

4. — Ռաշքիւնեանց վառն հաւասարապէս ծիրանի էր, և տուտնը ճեղքուած երկու կամ աւելի մասանց, եւրոպական ոճով: — Նշանը՝ քաղապական առիւծ մը, բռնած արքունի խաչագղտի զարագանը:

և նոյնպէս ոսկեհիւս: — Բունը՝ գրեթէ ստուգապէս վերջացած խաչաքար՝ գնդով, և վառը կապուած անոր վրայ:

Մեծն Լեոն ընդունեցաւ Հոովմայ հայրապետէն ու պատերազմաց մէջ գործածեց Ս. Պետրոսի դրօշն ալ, որ յաջորդաց անցած լինելու չէ:

5. — Մամիկոնեանցը կամ Սպարապետականը միայն գիտենք ստուգապէս իշխանական հին վառերէն: Անոր պատատառին գոյնը կը թուի սպիտակ, և ձեր՝ չորեքկուսի երկայն: — Նշանն էր արծիռ մը՝ մագիլներուն մէջ աղեղ մը բռնած, և հաւանօրէն կարմրագոյն: — Բունը՝ նիզակ մը, յատուկ միւս իշխանականաց ևս, ու վառը կապուած անոր վրայ:

6. — Օրբելեանց դրօշն ալ գիտենք մասամբ. այն է պատատառին կարմիր գոյնը, և նշանին սպիտակը: — Նշանին պատկերը հաւանօրէն առիշտ մ'էր:

7. — Քրիստոնեական դրօշն էր ծիրանի. հին ժամանակ ապահովապէս չորեքկուսի ոսկեծոյ, միջին դարուն նրկձիղ կամ նրկքձիղ տառաւոր: — Նշանը՝ ոսկեհիւս խաչ մը, որ ի սկզբան մենագրական, յետոյ փոխուեցաւ սովորական ձևին և ոսկի կամ այլ գոյներու, և հաւանօրէն միջին դարուն ունէր իւր անկեանց մէջ չորս տէ-

բունական հայ մենագրերն ալ, թէպէտ
ոչ միշտ: — Բունը՝ նիզակ մ'էր, և վառը
կապուած անոր վրայ: Կը տարուէր պա-
տերազմաց մէջ, և Բագրատունի թագա-
ւորաց առջևէն:

Խաչադրօշէն զատ՝ մեր Բագրատունիք
և Ռուբինեանք ունէին իբր նշան բուն
խաչն ալ իրենց առջևէն:

Տ. — Նշանակիր կամ Դրօշակիր մ'ու-
նէր վառը, որ արքունականին համար
իշխան մը կը լինէր՝ տրհմային ժառան-
գութեամբ, և իշխանականաց համար՝ զի-
նուոր մը:

ՆՈՐ ԴՐՕՇՆԵՐԸ

Յետ տեսնելու և ծանօթանալու մեր հարց դրօշներուն, ի՞նչ վառ կրնար ծածանիլ այժմ Հայերուս գլխին վերև։

Ազդիս մէջ ըսի՝ թէ հայ անուամբ շատ դրօշներ ու նշաններ հնարուեցան կամ առաջարկուեցան, որոնք աղերս չունէին պատմութեան հետ. այլ արդիւնք էին ենթադրութեանց, ազատ ախորժակաց կամ արտաքին ազդեցութեան. ինչպէս զանազան եռագոյներն ալ, որոնք ոչ միայն զիրար կը հակասէին, այլ նաեւ եթէ միանային և ընդհանրանային, եւրոպեան եռագոյներու խառնակութեանց մէջ նոր մ'ալ պիտի յաւելուին, փաստ մը պիտի լինէին մեր հետեւակութեան, ու միշտ անհասկանալի պիտի մնային դրական մտքերէ։ Դաշնակցական կառավարութեան ստեղծած եռագոյնն իրեն հետ վերջացաւ, իսկ ներկային յաւերժացումն ոչ ոք կ'երաշխաւորէ։

Արդարեւ ուրախալի էր տեսնել՝ որ այս խնդրով զբաղողներէն մեծագոյն մասն իրենց տեսութեանց ու ձեռնարկութեանց մէջ ցոյց տուին պատմականին փարումը. ապացոյց՝ թէ դասականութեան ընտիր ճաշակն ու հոգին դեռ վառ կը մնան շա-

տերու սրտին մէջ: Հին ժողովուրդ մը,
դաստիարակուած մեր նախնեաց գիտու-
թեան բովին մէջ, սնած անոնց նուիրա-
կան յիշատակօք, և կառչած հին Հայաս-
տանի վերանորոգման գաղափարին, ըստ
իս չպիտի կարենանք աւելի պատուա-
կան, ազնիւ ու մեր սրտին մերձաւոր
դրօշ մ'ունենալ, քան առնլով նոյն ինքն
մեր հարց ստեղծած ու նուիրագործած
ներէն, որոնք երկար դարերու հոլովման
մէջ ներկայացուցին Հայութիւնը, որոց-
մով քաղաքակիրթ մարդկութիւնն անցե-
լոյն մէջ ճանչցաւ ու մեծարեց մեր ազգը:

Արքունական նշաններէն մին կամ միւ-
սըն առանձին զետեղուած մեր դրօշին վրայ,
պիտի ներկայացնէր հարստութիւն մը մի-
այն ու մեր պատմութեան լոկ մէկ մասը, և
ոչ ամբողջ անցեալը: Ուրեմն պատշաճ
պիտի լինէր ընտրել մեր հին հասարակաց
դրօշը, որ է ծիրանի պատառը՝ դեղին
(ոսկի) խաչանշով: Այս նշանը, յաջոր-
դած նախկին փրկչական մենագրին, ի-
րեն ինչ ինչ օրինակներ թողած է յունա-
կան կամ լատինական ձևով, ինչպէս
տեսանք. և որ սակայն չի ժխտեր մեր
հնութեանց մէջ ծանօթ ուրիշ խաչաձևե-
րու գործածութիւնն ալ հին վառելիւ վրայ:
Եւ մեք առանց վարանելու, մանաւանդ

Թէ ցնծութեամբ կրնայինք ընտրել հայկական խաչը՝ ծիրանեգոյն վառի, վրայ որուն գիտնական աշխարհն ուշադրութեամբ ու յարգանօք պիտի նայէր:

Քաջալերուած միաբանակցացս հրաւիրէն, ուրախութիւնն ունեցայ 1919ին յօրինելու և հրատարակելու նման դրօշ մը, որոյ պատկերը կու տամ հոս (Ձև 8): Անոր տարերքն էին, արքունի և ազգային դրօշուց ձին ծիրանին՝ իւր ազնուագոյն երանգով, որ էր կարմրախառն մանիշակագոյնը (աստ՝ 22): Կ'աւարտէր հին դեղին (ոսկի) ծոպով, երբ դէպ ի վար կախուէր տիգէն. և առանց ծոպի՝ ուղիղ հատմամբ և կամ ճեղքուած տանով՝ երբ հորիզոնաձև էր, որպէս զի չկքի ծանրութենէն: Անոր կեդրոնը զետեղուած էր հայկական խաչը, հաւատարիմ օրինակութեամբ իւր կորութեանց ուներքին զարդին՝ հին հայ քանդակէ մը (Գեղարուեստ, 1911), և վերին բազկին երկարացմամբ կամ հաւացմամբ: Իւր կորութեանց նախագաղափարը կ'երևի էջմիածնի մենագրական խաչին վրայ իսկ, և որ ինձ գործակցող իտալացի արուեստագիտաց ալ շատ հրապուրիչ թուեցաւ յառաջընթացութեանս մէջ: Իսկ տեղն առած էի սասանեան քանդակներէ, որուն յար և նման էր հայկական

նիզակը։ Այս կրնայ լինել մեր այժմեան
դրօշին սովորական յօրինուածը։

Հրատարակածս սակայն աւելի ճոխ էր
և դրուած հանդիսական կամ զինանշանի

Ձև Ծ. Հայկական դրօշի ծրագիր

ձևին ներքև, խաչին չորս թևոց մէջ գետե-
ղուելով ուրիշ չորս նշաններ ժամանա-
կագրական կարգաւ, որ էին՝ Արշակու-
նեաց զոյգ արծիւն՝ արևով, Էջմիածնի
փրկչական մենագիրը, Բագրատունեաց ար-
ծիւր, և Ռուբինեանց առիւծը, մեր այս

տեղ տեսած ձևերէն իսկ առնուած: Իրաւ է, արքունական նշաններ են անոնց երեքը. սակայն թագաւորութիւնք անբաժան էին ազգին գոյութենէն, ազգն իսկ կը ներկայացնէին, և անոնց նշանները միանգամայն ազգին ալ էին: Ասոնք իմ դրօշին վրայ խմբուած՝ կը խորհրդանշէին Հայաստանի նախկին անկախութեան երեակ շրջանները, և միանգամայն մեր աշխարհին ամբողջութիւնը կովկասէն ի Կիլիկիա, մեր պատմական սահմանները: Իսկ մենագիրը կը նշանակէր քրիստոնէութիւնն ի Հայս, որ ազնուացուց և պահպանեց մեր ցեղն ու քաղաքակրթութիւնը, և որոյ ներքե կոուեցան և անմահացան մեր հին նահատակները: Կը համարիմ՝ որ այսպիսի դրօշ մը, որոյ վրայ համակ պատմութիւնն ու տոհմային անցեալ աւրուեստը կը պանծան, պիտի կարենար բոլորէն աւելի խօսիլ զարգացեալ Հայութեան մտաց ու սրտին:

Ասոր հետ կարելի էր վերանորոգել Սպարապետական կամ Մամիկոնեան խորհրդաւոր դրօշն ալ, և շատ պատշաճապէս սեպհականել հայ զօրութեանց վերին հրամանատարին: Ինչպէս հանդիսական դրօշին նշաններէն ևս պատրաստել առանձին վառեր՝ այլ և այլ ծառայութեանց համար: Ինչո՞ւ մեր հին բնիկ նը-

շանները նորահնար կամ օտարամուտ ձևերու չափ և անոցմէ աւելի իրաւունք չունենան պահելու իրենց գոյութիւնը՝ զոր դարերը նուիրագործեցին։ Մեր հարց սահմանաց վրայ՝ զոր կը պահանջէինք, և ուսկից չենք հրաժարած սրտով, բնական չէ՞ր կանգնել նաև մեր հարց նշանակները, որոցմով ծանօթ էին այդ սահմանք, և որոնք մեր գեղեցկագէտ ճաշակն ալ կարող են աւելի գոհացնել քան ուրիշ ձևեր։

Այս դրօշս համակրութեամբ նկատուեցաւ Կոչնակ, Ararat և Հանդես ամսօրեայ պարբերականներէն՝ զորս կոչեցի ազդիս մէջ։ Անոր օրինակներն իսկոյն գնուեցան ու սպառեցան ազգէն։ Պարիսի հայ ազգային պատուիրակութիւնը նկատողութեան առաւ զայն, և որոշեց՝ ուրիշ ձևերու հետ առաջարկել միացեալ Հայաստանի իւրնորոյն վերջնական կարգադրութեան առթիւ։ Յետոյ կազմուեցաւ հանգուցեալ Հայկ. Հանրապետութեան անարուեստ զինանշանը, մասամբ իմ դրօշիս և մասամբ երեւակայական տարրերու խառնրդով մը։ Սակայն յետոյ այդ ամենուն փոխարէն Հայաստանի վրայ ծածանեցաւ կարմիր դրօշը, և հիմայ բոլոր միւսերը պատմութեան կը վերաբերին ցնոր պատահականութիւն։

Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԴՐՈՇՆԵՐ

Ա. — ԾԱԳՈՒՄՆ: — Կոստանդիանոսի շաքարումը սրբեց հեթանոսական կամ աշխարհիկ վառը, և անոր առջև բացաւ Եկեղեցւոյ դռները: Արեւմտեայց մէջ ծանօթ է՝ որ Գրիգոր Գէն սկսեալ (731ին) Հռովմայ քահանայապետք օրհնեալ դրօշներ նուէր կը յղէին թագաւորաց, անոնց վրայ խորհրդաւոր նշաններով, և սրբազան դրօշներ կը տարուէին նաև քահանայապետական թաքորներու մէջ, վերջինս յիշուած 1119ին (Moroni, IV, 87): Վերև նկատեցինք Ս. Պետրոսի վառն ալ, զոր իննովկենտ Գ յղեց մերս Լևոնի: Ես ինքս Հռովմայ մէջ խուզարկութեանցս առթիւ՝ Ս. Կղեմէս եկեղեցւոյն ներքև հանդիպեցայ նոյն սրբոյն նշխարաց փոխադրութեան մէկ որմանկար տեսարանին, Թ-ԺԱ դարերէն, յորում կան երեք վառեր.

կտաւը քառակուսի հաւասարակողմ, ստորոտն աւարտած աստամնածե. գոյնն է կարմիր կամ ծիրանի, ծածկուած ոսկի աստղերով. իսկ իրենց վերեւ՝ բնին ծայր մի մի խոշոր ոսկի խաչեր:

Մեր քով եւս ոչ նուազ հին յիշատակներ ունինք անոր: Է դարուն՝ վահանայ բանակին մէջ կրօնաւորաց խաչադրօշներ տանելն (աստ, 72) ապացոյց մ'է՝ թէ անոնց ընտանի էին վառերը: Կրնան նոյն իսկ եկեղեցւոյ մէջ գործածուածներէն լինել անոնց կրածները քան բանակին սեպհականներէն: Ասոր փաստ մ'է այն պարագայն՝ որ մեր դրացի Աղուանից վաչագան արքային օրով, երբ Լուսաւորչին ու Հռիփսիմեանց նշխարները հոն կը հասնէին, ընդ առաջ գնացին արքայն, նախարարք, և իրենց հետ կղերը «դասք դասք, յիւրաքանչիւր գնդի նշանք սրբոցն (որ է սրբոց կենդանազրեւրով) մեծապէս ընդ աւետարանին պատուեալք, բազմութիւնք խաչից և զանազան նշանացն փողփողելով» (Կաղանկ. 50): Այս տեղեկութիւնը կը վերաբերի կամ իսկապէս վաչագանի ժամանակին՝ ե դարու վախճանին, և կամ պատմչին՝

որ է ի դարուն, և վերագրուած Եին։ Այնուհետև աւելի յաճախ կը հանդիպինք եկեղեցական դրօշներու։

Բ. — ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆՆԸ. — Կարևորագոյնն է սա, և ամենէն յառաջ մեր նկատելին։ Մեծ էր աղերսն ասոր ու գաւազանին մէջ, որ մինչև ցԺԲ դար խաչագլուխ էր կաթողիկոսին ու եպիսկոպոսաց համար միանգամայն՝ ըստ գանազան վկայութեանց զոր ունինք։ Այդ շրջանին խաչն էր հայրապետական վառի նշանն ալ։ Թ՛ դարուն՝ երբ Յիսէ ի Հայս կու գար ամիրապետին կողմանէ, Չաքարիա կաթողիկոսն անոր ընդ առաջ գնաց, և այնքան հաճոյ եղաւ, կ'ըսէ Վարդան, — զոր Յհ. կթղ. և Ասողիկ չեն յիշէր, — որ արարացին իրեն նուէր տուաւ «դրօշն՝ րառնալ՝ խաչ՝ ի վերայ նորա, և մտանել առաջի նորա միշտ¹»։ Հայրապետին սովորական իրաւունքն էր, և նշանակն անոր իշխանութեան, զոր կու տար և կը թոյլատրէր Յիսէ կրել իւր առջև՝ յաւելմամբ խաչին։ Միիթար Այրիվանեցին հաւանօրէն սխալ կը հասկանայ Վարդանայ խօսքը, երբ կ'ուզէ՝ որ Յիսէ նուիրած լինի խաչն ալ. «Ետ ոչում և խաչ ի վերայ՝ Չաքարիա կաթողիկոսին» (էջ 55)։ Մահ.

1. Վարդան պատմիչ, Վենետիկ, 1862, էջ 85.

մետականը չէր կարող խաչադրօշ ունենալ. իսկ զայն պատրաստելու և տալու համար՝ անոր սովորական նախագաղափարը տեսնելու էր հայրապետին քով Յամենայն դէպս՝ հին էր հայրապետական դրօշը. և փոխան նշանի ունէր խաչը. հասկանալի է ոչ պատահոին վրայ, այլ բնին ծայր, «ի վերայ», նման Ս. Կղեմայ վերոյիշեալ օրինակաց, և ուրիշ տոհմային նշմարաց զորս պիտի տեսնենք։ Անոր միւս հանգամանքները նկատենք յաջորդ համարին մէջ։

Գ. — ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ։ — Սոյն պիտի դրօշ մ'ալ կայ պատմութեան մէջ, աւանդեալ իրենց պատմչէն, զոր ըստ նորին վկայութեան. առեր է նոյն վիճակին հին առաջնորդներէն Պետրոս եպիսկոպոսէ, ինչպէս յիշեցինք (աստ, 21)։ Օրբելեան կ'ըսէ՝ թէ Ե դարուն Ադուանից Եսվադէն թագաւորը՝ Սիւնեաց առաջնորդին Անանիայի կը շնորհէ մեզ արդէն ծանօթ «գիւր թագաւորական դրօշն՝ կարմիր և ոսկետառն վառիչ, ունելով ի գլուխն գոնտ ոսկի, և ի վերայ խաչ պատուական»։ որով հոս ալ բուն վառին վրայ խաչին ձևը չկար ու չի յիշուիր. և կը հրամայէ որ միշտ տարուի Սիւնեաց եպիսկոպոսին

անջնէն (17). և այս՝ ի վարձատրութիւն
աղուանական տառից՝ զոր իբր թէ Անա-
նիա հնարեր է օգնութեամբ Բենիամինի
(39), որ հայ տառից գիւտին առթիւ
ծանօթ անձն է:

Այս աւանդութեան տարերքը պղտոր
են, Ըստ Կորեան՝ Աղուանից այբուբենը
կերտողը Մեսրոբ եղաւ¹. իսկ Պետրոս՝ Օր-
բելեանի աղբիւրն՝ աներևոյթ է և կասկա-
ծելի, ինչպէս դիտել տուի (աստ, 50):
Բան մը սակայն շատ յայտնի է. Սիւ-
նեաց առաջնորդաց ջանքերն ու պահանջ-
ները՝ փառաւորելու իրենց աթոռը, գրե-
թէ հաւասարեցնելու հայրապետականին,
մետրապոլիտութեան պատուով, նախագա-
հութեամբ ի ժողովս, բարձակցութեամբ
կաթողիկոսի հետ, ոսկեթել բազմականով,
հայրապետական բազմախաչ նափորտով,
«աստուածապատիւ հոգևոր տէր» տիտ-
ղոսով. վերջապէս հայրապետական պա-
տուոյ ամէն նշանակներով. և այս բոլո-
րին վերագրելով կեղակարծ ծագումներ՝
որոց մասին խօսել տեղւոյս չէ. և երբեմն
ապստամբելով իսկ կաթողիկոսէն²: Հա-
կամէտ եմ հաւատալու՝ թէ նոյն աղբիւ-
րէն էր անոնց դրօշն ալ. այս ինքն հայ-

1. Կորիւն, Վենետիկ, 1833, էջ 18.

2. Հմմտ. (աստ 50).

րապետականին նմանողութեամբ, թէև մի
և նոյն ժամանակ Աղուանից և Հայոց
թագաւորաց ալ սեպհական լինէր այն
(աստ, 21, 51). և հայրապետէն ընդու-
նուած՝ ոչ կանուխ քան զԲագրատու-
նեաց թագաւորութիւնը: Եթէ Սիւնեաց
առաջնորդը կրնար այսպիսի արքունա-
կան ձևով մը հոխանալ, ո՞րչափ աւելի
ազգին հոգևոր գլուխը պիտի զարդարուէր
անով: Անանիա կաթողիկոսը նուաճելով
Սիւնեաց ապստամբ աթոռը, կապտեց ա-
նոր նախկին իրաւունքները: Յետոյ Սար-
գիս կթղ. կը ձեռնադրէ անոնց զտէր
Յովհաննէս, և վերստին կը շնորհէ ա-
նոր ի մէջ այլոց և «զոսկեատուտն վառն»
(Ստ. Օրբ. 222): Սարգիս զայն իւր ձեռ-
նադրելոյն նուիրելու համար՝ նախ ինքն
ունենալու էր: Վերջապէս նկատենք՝ որ
կաթողիկոսին զնդագլուխ գաւազանը, ծա-
նօթ Տաթևացւոյն օրով, որ ըստ նոյն
վարդապետին կը նշանակէր հայրապա-
տին իշխանութիւնն ամբողջ ազգին վրայ
(Քրդ. ձմր. 168), սերտ աղերս ունէր սոյն
դրօշին հետ, ինչպէս արքունի գաւազանն
ու վառն իրարու հետ (աստ, 52-3):

Ի. — ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ: — Հայրապետա-
կանէն կամ Սիւնեաց մետրապօլիտականէն

զատ՝ բոլոր եկեղեցիք ունէին սրբազան վառեր, աւելի կամ նուազ հարուստ՝ ըստ կարողութեան ու ճաշակի նուիրողին: Այսպէս ժ դարուն՝ Գուրգէն Արծրունի իւր և հարազատին ձեռակերտ Սիոն եկեղեցւոյն կ'ընծայէ «ոսկեկերտ խաչադրօշեալ՝ ընդելուզեալ մարգարտով և ակամբք պատուականօք հրաշագործեալ» (Թովմ. 288): Եւ նախկին Գուրգենի մէկ ճակատամարտին մէջ ընդդէմ Բուղայի՝ քահանայք կ'երեւին «նշանակ իւրեանց կանգնեալ զնշան խաչին» (նոյն, 165): 1136ին՝ Քեանոյ պաշարման պահուն՝ քաղաքին քահանայք «խաչիօք վառելովք» պաշտօն կը մատուցանէին, կ'ըսէ մեզ Մատթէոս ուռհայեցին (ՄԾԳ): 1197ին Գրիգոր Տուտէորդին Սանահնի եկեղեցւոյն կը նուիրէ «նրկոռ վառաթլաս ոսկեգիր՝» ըստ արձանագրին (գրչ. Թ. 110 Ս. Ղզր.): Այս վառերը կը մնան ու կ'երևին դեռ ժի դարուն: Առաքել դաւրիժեցին կը պատմէ՝ թէ երբ Շահաբաս յԱգուլիս կը մտնէր, տեղւոյն կղերը խաչով՝ աւետարանով և «ամբարձեալ խաչաշամ», շահին ընդ առաջ գնացին (Իէ): Ինչ որ մեք ունէինք, մեր դրացի Աղուանք ալ ունէին. և երբ 1220ին Թաթարք անոնց աշխարհը խուժեցին, երէց մը, կ'ըսէ Կիրակոս, իւր ժողովուրդն ա-

ռած, «խաչիք վառելովք ընթացաւ առաջի նոցա»։ Բայց փոխանակ գթութեան՝ մահ գտնելով (էջ 103)։ «Խաչիւք վառելովք՝» կը նշանակէ ըստ տառին խաչ՝ որոյ վրայ վառ կախուած է, ոչ թէ վառ՝ երեսին խաչ ձևացած։ Սակայն ադոր հակառակն ալ կար։ Գուլիելմոս Բիւրրիւկացի, ուղևոր առ Թաթարս 1253ին, կը պատմէ՝ թէ վանականի ձևով հայ մը, Սարգիս, որ այն կողմերը կը թափառէր, «վառ մը շինեց համակ ծածկուած խաչերով. և երկայն եղէգ մը գտնելով իբրև տէգ, անոր վրայ անցուց»¹։ Կրնանք հետևցնել՝ որ այս ձևը ծանօթ էր Հայոց մէջ։

2. — Վառերու կանոնաւոր գործածութիւնը կը յիշուի նաև յուդարկաւորութեանց առթիւ։ Զոր օրինակ՝ ԺԳ դարուն Օրբելեան Սմբատայ Թաղումը կը կատարուի «խաչիք վառելովք» (Ստ. Օրբ. 307)։ Գր. Տաթևացին նոյնն իբր սովորական կը դնէ ամէն յուդարկմանց, ըսելով. «խաչն վառելալ յառաջ» (Հարց. Ժ, Ե). և անոր նիւթական նկարագրին հետ խորհրդական մեկնութիւնն ալ կու տայ՝ ըստ իւր խորհրդապաշտ տեսութեանց, գրելով. «Եւ այն որ ի վերայ վառին նիւ-

1. Guill. De Rubruquis, Voyage en Tartarie, ԳԼ. ԼԸ.

Թեղէն զգեստ է, զի զայցէ խաչն ի վերայ լուսեղէն ամպոյ, ... զոր նշանակէ մանր վարշամակ վառին» (անդ)։ Հոս ալ խաչը զատել կը թուի վառէն, որ այս պարագային «մանր» է կամ փոքր. ինչպէս զատ է արդարեւ Ս. Ղազարու մաշտոցի մը (1704ին) նկարին մէջ ևս, — հրատարակուած Հայ տարագի պատմութեան մէջ (371), — ուր դպիր մը դազողին առջևէն կը տանի կարմիր ու երկնիդ դրօշ մը, որոյ բունը խաչով կ'աւարտի, և ասոր ստորոտէն կը կախուի վառը։ Գոյն և խաչ կատարելապէս համաձայնք վերոյիշեալ կղեմեան օրինակաց։ Սոյն վկայութեանց մէջ միանգամայն ակներև է՝ որ վառն ազնուականաց թաղման մէջ թուով աւելի էր, և ռամկաց՝ մի միայն։

Յ. — Յիշեալ դրօշները միշտ խաչանիշ էին։ Բայց մեք տեսանք կաղանկատուացոյն վկայութեան մէջ (աստ՝ 97) սրբոց կենդանագրովք վառեր ալ, որոնք մեր մէջ սակաւ կը յիշուին և աւելի ուշ։ Հայ հնութիւնը պահած է մեզ գեղեցիկ օրինակ մ'այսպիսի դրօշի էջմիածնի թանգարանին մէջ, որոյ ձևը յառաջ կը բերեն Սհկ. վ. Աստուածատրեան¹, Պր. Ա. Զօպանեան², և ես այս տեղ (Զև 9)։

1. Պատկերացոյց հաշար. հնոշք. Էջմ. Պր. Ա, Բ. 2, 20.

2. Հայ Էջեր, Պարիս, 1912, պատ. 15.



դի 9. Էջմիածնի վանք

Եւ է կերպասեայ, չորեքկուսի, երկայնութիւնը քիչ մ'աւելի քան զլայնութիւնը, և աւարտած երեք արձակ ժապաւենով, որոց երկայնութիւնը վառին կիսուն չափ է¹։ Ընտիր և նուրբ ասղնեգործութիւն գունագոյն և ոսկեթել։ Մէկ երեսին վրայ փրկչական պատկերը, նստած յաթոռ, ձախողն աւետարան բռնած և աջով կ'օրհնէ։ Իւր բազմոցին շորս անկեանց քով կան աւետարանչաց չորեքկերպեան կենդանիք, և գլխոյն վերև արեգակն ու լուսին։ Միւս երեսին վրայ, որ մեր պատկերինն է, կանգնած է Լուսաւորիչը՝ սրբազան զգեստով և լատին խուրով. իւր աջակողմը Տրդատ, ձեռօքն աղօթական ու նայելով Լուսաւորչին. ձախակողմն Հռիփսիմէ, աջովը իսաչ բռնած ու ձախը հրաժարական ձևով. և երկուքն ալ բիւզանդական արքունի տարազն ունին։ Յիշատակարան մը, որոյ թուականը ջնջուած է, իբր նուիրատու կը նշանակէ զՍիմէոն քահանայ և ամուսինը Քամալ իսաթուն։ Նշանաւոր է առաջին տողը, «Վառս վայելէ Լջմիածնի», որուն նուիրուած էր։ Պատկերներն այնպէս շինուած

1. Վենետիկոյ Ս. Մարկոսի կամ Հանրապետական դրօշն ալ մինչեւ ցարդ կը կախէ երկայն ու խիտ ժապաւեններ։

են՝ որ վառը դէպ ի վար կախուի բնէն,
ոչ թէ մեկուսի կարկառի. ճիշդ ինչպէս
կը տեսնենք վերոյիշեալ կղեմեան վա-
ռերն ու ժե դարուն արեւմտեան եկեղե-
ցական դրօշներն ալ (Desjar. 123):

Առաքել դաւրիժեցի պատմութեանը մէջ
յառաջ կը բերէ Յայսմաւուրի յիշատակա-
րան մը, յորում կը պատմուի Լուսաւորչի
աջոյն փոխադրութիւնն Էջմիածնէ յԱդ-
թամար՝ 1462 թուին, Զաքարիա Բ կա-
թողիկոսի ձեռամբ, «հանդերձ խաչալա-
մովն՝ որ նկարեալ կայր ի մի կողմն
պատկերն տէրունական, և ի միւս կողմն
Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի, և
թագաւորին Տրդատայ և չքնադագեղի
կուսին սրբուհւոյն Հռիփսիմեայ. այլ և
ոսկեթել յօրինուածով և ազգի ազգի գու-
նովդ, սուրբ ուրարովն երանգ երանգ զար-
դարեալ» (Լ): Մեր դրօշն է այդ և որ այն
ժամանակներէն տեսողաց աչքերը կը խորտ-
դէր: Իւր գոյութիւնն ուրեմն կանուխ է
քան զ1462: Իսկ Էջմիածնին ընծայուիլը՝
մեր միտքը կը տանի թուականէս քսան
տարի յառաջ, երբ հայրապետական ա-
թոռը Սսէն հոն կը փոխադրուէր, և ժո-
ղովրդեան հոգին կ'արծարծէր՝ իւր ցնծու-
թիւնը յայտնել տալով սոյնպիսի թանգ
նուէրներով:

Այս վառն ընծայուած էր «Էջմիածնի», ոչ կաթողիկոսին, ուրեմն հայրապետական չէր, կամ գոնէ տարբեր հայրապետականին նախկին նկարագրէն. զի ըստ յիշեալ Յայսմաւուրին՝ «բարձրացեալ կայր ի ծայրս ձողոյ, և խաչ ոսկի կառուցեալ ի գլուխ նորա», առանց յիշելու գունդը: Իւր գեղեցկութեան ու խորհրդաւորութեան համար, Զաքարիա կթղ. երբ կ'անցնէր քաղաքներէ, նոյն «խաչալամն առաջի գնայր, կ'ըսէ, ունելով ի գլուխն զխաչ ոսկի՝ փայլեալ լուսոյ նման»: Ժեղարու վերջերը Վրթանէս անուն եպիսկոպոս մը գաղտնապէս կորզեց Աղթամարէն ու Էջմիածին դարձուց, իսկ ժամանակը մաշեցուց ու դրաւ այժմու վիճակին մէջ:

Այսքան ծանօթ է ինձ ցարդ եկեղեցական հին ու պատմական դրօշներէ, որոց նորերը չեն հետաքրքրեր ոչ զիս և ոչ ընթերցողներս, ու չեն ստիպեր զիս զբաղելու իրենցմով:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ Ն

Եկեղեցական դրօշներու ծագումն անծանօթ, բայց գոյութիւնը բաւական հին է թէ միւս ազգաց և թէ Հայոց մէջ, Ը-թ


դարերուն արդէն յիշատակուած, և հետ-
քերը մնացած. թէև այժմ անոր գործա-
ծութիւնը նուազած է մեր քով: Անոնց
մէջ ըստ նուիրապետական կարգի կային.

1. — Հայրապետականը, որոյ պա-
տառն էր կարմիր: Բնին գլուխն հաւանո-
ւէն ոսկի գոշնդ մը, և ասոր վրայ խաչ մը,
նման արքայական դրօշին ու հայրապե-
տական գաւազանին:

2. — Սիւնեաց մետրապոլիտը նոյնը
սեպհականեցին իրենց միջին դարուն, ըստ
իս՝ հետևողութեամբ կաթողիկոսին:

3. — Եկեղեցեաց սեպհականը, որոց
պատառը կը զանազանէր ըստ արուեստի,
լինելով կարմիր, կամ գոշնագոյն սաղնե-
գործ, կամ ծածկուած ազնիւ քարերով,
սրբազան պատկերներով: Իսկ բունը կը
վերջանար իսաչով՝ աւելի կամ նուազ
հարուստ, և վառը սովորաբար կը կա-
խուէր դէպ ի վար՝ անոր ներքև:





Յ Ա Ն Կ Ն Ի Ի Թ Ո Յ

Ա. 27. 5.

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ. — ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՇՆԵՐ. 7-86:
Ա. ԿՈՉՈՒՄՆ. ԴՐՈՇ, ՎԱՌ, ՆՇԱՆ, ՆՇԱՆԱԿ, ԱՐԱՄ. 7-9:
Բ. ԵԱԳՈՒՄՆ. Ի ՏՆՈՒՅ ԿԱՐ ԲՈՂՈՐ ԱՊԿԱՅ ՔՈՎ. 9-11:
Գ. ՀԱՅ ԴՐՈՇՆԵՐ. ԳՂԽԱԼՈՐ ԿՐՈՂՆԵՐԸ. 11-17. —
Հ. ԱՎԷՆԻ ԽԱՊԵՈՅՆԸ և ԱՊԵՐԽՆԵՐԸ. 11-16. — ՍԱՐ-
ՐԷԻ ՄԵՍՈՒԹԻՆԸ. 16.

Դ. ԱՐՇԱԿՈՒՆԻՆ. ԿԱՐԺԻՔՆԵՐ. 17-19. — ՊԱՄԱՄԱ-
ԿԱՆ ԿՐՈՒԱՆ ՄԸ. 19-20. — ԳՈՅՆԸ՝ ԺԻՐԱՆԻՆ և ՈՍԿԻ.
20-24: ԾԻՐԱՆՈՅՆ ՍԱՆՄԱՆԸ. 22. — ԴՐՈՇԻՆ ՁԼԵՐԸ
ՊԱՆԱՊԱՆ. 24-26. — ՆՇԱՆԸ՝ ՎՈՅՎ ԱՐԺԻ և ԱՐԼ. 26-
31. — ԳԱՌԻՆ ՓՈԽՈՆԱԿՈՒԹԻՆՆ ԱՆՆԻՄԻ Է. 31-32.
— ԲՈՒՆԸ՝ ՆԻՊԱԿ ՄԸ, և ԿԱՊԵԼՈՒ ԿԵՐԱԿԵՐԸ. 32-33. —
ՊԱՄԿԵՐՆԵՐ. 25, 29.

Ե. ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆ. ԳՈՅՆԸ՝ ԺԻՐԱՆԻ և ՈՍԿԻ, և ՈՍ-
ԿԽՈՒԱՆ. 33-34. — ՆՇԱՆՆ ԱՐԺԻ ՄԸ. 35-37. — Ա-
ՆՈՅ ԱՌԽԺՆ ՕՄԱՐ ՎՈՐԺ ՈՒ ՆՇԱՆ. 37. — ԲՈՒՆԸ և
ԿԱՊԵԼՈՒ ՈՃԸ. 38. — ՊԱՄԿԵՐ. 36.

Զ. ՌՈՒԲԻՆԵԱՆԸ. Հ. ԱՎԷՆԻ յՈՐԻՆԱԺՆԵՐԸ. 38, 40.
— ՀԱՒԱՆԱԿԱՆ ՎՈՅՆԸ ԺԻՐԱՆԻ և ՈՍԿԻ. 38-40. —
ՏՈՒՆԸ ՃԵՂՔՈՒԱԾ. 40. — ՆՇԱՆԸ՝ ԹԱՎԱՊԱԿ ՄԱ-
ԿԱՆԱԿԻՐ ԱՌԽԺ ՄԸ. 40-42. — ՆՇԱՆԻՍ ԺԱՎՈՒՄԸ. 42-
48. — ՄԵԺԻՆ ԼԵՈՆԻ ՎՍԱԿՄԱՆ ՄԱՐԻՆ. 46-47. —
Ս. ՊԵՐՈՒՄԻ ՎԱՌԸ, և ՎԵՐՋԻՆ ԼԵՈՆԻ ՆՇԱՆԸ. 48-50.
— ԲՈՒՆՆ ԱՒԱՐՄԱԾ ԽԱՀԱՔԱՐԾ ԿՆՎՈՎ. 50-52. —
ՎԱՌԸ ԿԱՊԵԼՈՒ ԿԵՐԱԿԸ. 53. — ՊԱՄԿԵՐՆԵՐ. 3, 39.

Է. ԻՇԽԱՆԱԿԱՆՔ. ՎԿԱՅՈՒԹԻՆԸ. 53. — ՄԻՋԻՆ
ՄԵԺ ՆԱԽԱՐԱՐՔ ԿՐՈՇ ՈՒՆԷՐԻՆ. 54. — ԳՈՅՆԸ ՍԱԽՈՒՍԱԿ՝
ԿԱՐԺԻՐ ՆՇԱՆՈՎ. 55-57. — ՕՐԵԿԼԻԱՆՑԸ ԿԱՐԺԻՐ՝ ՍԱԽ-
ՈՒՍԱԿ ՆՇԱՆՈՎ. 57. — ԶԱՂԸ՝ ԿՐՈՂՆԵՐԸ. 58. — ՆՇԱՆ-



ներէն՝ Մամիկոնեանցն աղեղ և արծիւ. 58-63: — «Աղեղնադրօշի» անճիշդ մեկնութիւն մը. 60-62: — Օրբելեանցն առիւծ. 64: — Բունը նիզակ մը, և կապելու կերպը. 64: — Հին քանդակներ՝ որ նշան կարծուելու չեն. 65-70:

Ը. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴՐՈՇԸ: Խաչանիշ, և ծաղումն. 71: — Գործածութիւնը մեր մէջ. 71-73: — Խաչադրօշին նշանն՝ ի սկզբան մենադրական. 73-76: — Գոյնը ծիրանի, նշանն ու ծոպն ոսկի. 77: — Դրօշիս չին նկարներ. 77-80: — Հայկական խաչը. 80-82: Բունը. 83: — Խաչը փոխան դրօշին. 83: — Պատկերներ. 78, 81:

Թ. ՆՇԱՆԱԿԻՐ. 84: — Արքունի նշանաց ու դրօշին՝ նախարարք էին. 84-85: — Իշխանականաց՝ զինուոր մը. 85:

ԱՄՓՈՓՈՒՄՆ. 87-89:

ՆՈՐ ԴՐՈՇՆԵՐԸ: Ծրագիր, և հրատարակուած դրօշ մը պատմական տարրերով. 90-95: — պատկեր. 93:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ. — ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԴՐՈՇՆԵՐ. 96-109:

Ա. ՆԱԳՈՒՄՆ: Ընդհանուր և հայ եկեղեցեաց մէջ. 96-97:

Բ. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆԸ: Պատառն առանց նշանի, և բնին ծայրը խաչ. 98-99:

Գ. ՍԻՆԵԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ: Գոյնը՝ կարմիր և սուկեառան, բունն աւարտած խաչակիր զնդով. 99: — Անուուած հայրապետականէն. 100-101:

Դ. ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ: Յիշատակութիւնք. խաչը բնին կամ վառին վրայ. 101-103: — Նոյներն յուզարկմանց առթիւ. 103-104: — Դրօշներ սրբոց պատկերով, և Էջմիածնի պատմական վառը. 104-108: — Պատկեր. 105:

ԱՄՓՈՓՈՒՄՆ. 108-109:

ՀԱՍԽՈՍԱԿԱՆՔ ՆՈՅՆ ԳՐԶԻՆ

ԵՐԴՈՒՄՆ ՀԻՆ ՀԱՅՈՅ ՄԷՋ. — Մանր նկարագիր զանազան երգմանց, արարողութեանց, պահարանաց, բժժանաց. էջ 326:

ՃԱՇԵՐ ԵՒ ԽՆՃՈՅՔ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ. — Ընդարձակ նկարագիր հին ազնուականութեան, վանականաց ու ռամկին հաշերու և ընդունելութեանց. էջ 504:

ՀԱՅ ԾԷՍԸ 1911 ՏԱՐԻՈՅ ԱԶԳԱՅԻՆ ՍԻՆՀՈՒՈՍԻ ԳՈՐԾՈՅ ՄԷՋ. — Քննութիւն և ծրագիր ծիսական նորոգութեան. էջ 200.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ ՀԱՅ ՏԱՐԱԶԻՆ. — Անոր 25 դարերու նկարագիրը, 142 գունաւոր ու սև նկարներով, մէկ եռագունով, և շքեղ տպագրութեամբ. էջ 486:

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՀԻՆ ՀԱՅՈՅ ՔՈՎ. — Կը նկարագրէ հին հայ սրատանույն սնունդը, կրօնական, մտաւոր, մարմնական ու գիւնտորական կրթութիւնն ու խաղերը. էջ 430:

ԿԱՐԵՒՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ. — Անոր ծագման, նուիրապետութեան ու բաժանման վերաբերեալ հարցերը քննուած ու դրուած նոր լուսոյ ներքեւ. էջ 574.

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ. — Այս խնդրոց վերջնական ու կատարեալ լուծումն է՝ մանրամասն քննութեամբ. էջ իբր 200.

7987

0000110

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0000110

